

**ԳՐԻԳՈՐ ՆԱԶԻԱՆՉԱՅՈՒ «Ի ԾՆՈՒՆԴՆ ՔՐԻՍՏՈՍԻ»
ՃԱՌԻ ԵՂԻԱ ԱՍՈՐՈՒ ԵՎ ՎԱՐԴԱՆ ՀԱՂՊԱՏԵՑՈՒ
ՀԵՂԻՆԱԿԱԾ ԼՈՒԾՄՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ
ԱՐՏԱՅՈՒԼՈՒՄԸ «ՏՈՆԱՊԱՏՃԱՌ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐՈՒՄ՝**

Աննա Օհանջանյան

Գրիգոր Աստվածաբանի «Քրիստոս ծնեալ» ճառաչարի «Ի ծնունդն Քրիստոսի» միավորի լուծմունքներից հայ մատենագիրներին հայտնի են Հովհաննես Սարկավագի², Ներսես Շնորհալու և Վարդան Հաղպատեցու, Եղիա Ասորու, ինչպես նաև Մխիթար Գոշի, Դավիթ Քոբայրեցու, Գրիգոր Աբասյանի, Մեսրոպ Գանձակեցու անունով պահպանված լուծմունքներ³:

Թվարկված հեղինակների անունները խոսում են այն մասին, որ լուծմունքները գրվել են բուն հայկական միջավայրում, զանազան դարերում ապրած հայ մատենագիրների կողմից, թերևս հետապնդելով զուտ դավանաբանական նպատակ և բխելով դարի ու ժամանակի պահանջից: Այդ պատճառով տարբեր լուծմունքներ մեծ մասամբ մեզ են ներկայանում որպես փոքրիկ հատրնտիրներ, այսինքն՝ յուրաքանչյուր հեղինակ ըստ ճաշակի և ըստ պահանջի ընտրում է Գրիգոր Նազիանզացու ճառի մի շարք հատվածներ և մեկնում դրանք:

Լուծմունքներից զատ սույն հայտնի ճառի որոշ դրվագների մանր մեկնություններ հանդիպում են միջնադարյան այլ հայ հեղինակների գործերում, մասնավորապես, Քրիստոսի Ծննդյանն ու Հայտնությունը վերաբերող ներբողներում և ճառերում, ինչպես օրինակ՝ Զաքարիա Ջազեցու «Ի ծնունդ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» ճառում⁴: Հեղինակը օգտվում է Գրիգոր Աստվածաբանի ճառից բացառապես դավանաբանական նկատառումներից ելնելով՝ ընտրելով այն հատվածները, որոնք պատշաճում են Հայ եկեղեցու վարդապետության, այն

¹ Սույն հոդվածը տպագրվում է 13-6D381 ծածկագիրը կրող «Դրվագներ հայ աստվածաբանական մտքի պատմությունից» թեմայի շրջանակներում:

² Բնագրի հրատարակությունը տե՛ս Օհանջանյան Ա., Հովհաննես Սարկավագի «Լուծումն բանից Աստուածաբանի» լուծմունք-մեկնությունը, «Տարեգիրք» Աստվածաբանության ֆակուլտետի, 2013, էջ 66-85:

³ Գրիգոր Աստվածաբանի ճառերի լուծմունքների վերաբերյալ տե՛ս Մուրադյան Կ., Գրիգոր Նազիանզացիի հայ մատենագրության մեջ, Եր., 1983, էջ 169-194:

⁴ Տեառն Զաքարիայի հայոց կաթողիկոսի ասացեալ ի ծնունդ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, աշխ. Հ. Քյուսեյանի, Մատենագիրք հայոց, Թ դար, Թ հտ., Անթիլիաս, 2008, էջ 28-30:

է՝ քրիստոսաբանության, ջատագովությանն ու դավանանքի ճշմարտացիության ապացուցմանը¹:

Մեզ հետաքրքրող լուծմունքները կապվում են վերոբերյալ շարքում նշված հեղինակներ Եղիա Ասորու (12-րդ դ. 2-րդ կես), Ներսես Շնորհալու (մոտ 1100 - 1173) և Վարդան Հաղպատեցու (մահ. 1191 թ.) անունների հետ: Եղիա Ասորու մասին մեզ շատ բան հայտնի չէ. մի շարք ձեռագրերում նրա անունով հիշվում են Գրիգոր Աստվածաբանի ճառերի մեկնությունները և դրանց պատճառները: Ինչ վերաբերում է Ներսես Շնորհալուն և Վարդան Հաղպատեցուն, ապա հայտնի է, որ նրանք մտերմացել էին Հաղպատեցու Կիլիկիայում գտնվելու ընթացքում և միասին մի շարք ստեղծագործական և թարգմանական ծրագրեր իրականացրել: Ղ. Ալիշանն² ու Ն. Ակինյանը³ նշում են, որ վերջիններս միասին ձեռնամուխ էին եղել Դավիթ Անհաղթի «Բարձրացուցէք»-ի կամ «Ի սուրբ խաչն աստուածընկալ» ճառի պատճառի և լուծմունքի գրովյանը, որն էլ Ներսես կաթողիկոսը հետագայում վերածել է չափածո երկի:

Սույն հոդվածում նպատակադրվել ենք քննել Գրիգոր Աստվածաբանի «Քրիստոս ծնեալ» ճառաշարի Ա միավորի՝ «Ի ծնունդն Քրիստոսի» ճառի Եղիա Ասորու անունով հայտնի պատճառը և լուծմունքը, իրարից զատել Եղիայի անունով ձեռագրերում հանդիպող պատճառն ու լուծմունքը, տարանջատել Եղիայի գրչին պատկանող լուծմունքն անանուն մի լուծմունքից, որը շփոթվում է նրա լուծմունքի հետ և լուծել սույն անանուն լուծմունքի հեղինակի հարցը:

* * *

Ուսումնասիրողներից Գր. Զարբհանայանը, Ղ. Ալիշանը կամ Ն. Ակինյանը Գրիգոր Նազիանզացու «Ի ծնունդն Քրիստոսի» ճառի մեկնությունների մասին խոսելիս Եղիա Ասորու անունը չեն նշում: Եղիայի անունով պահպանված լուծմունքի մասին առաջին անգամ հիշում է Կիմ Մուրադյանը: Նա գրում է, որ Եղիայի գործերը պահպանվել են «պատճառ» վերնագրի տակ, սակայն իրականում դրանք նրա լուծմունքներն են⁴:

Եվ իսկապես, Եղիա Ասորու պատճառների և լուծմունքների հետ կապված խառնաշփոթ կա: Ուսումնասիրելով ձեռագրային նյութը՝ կարելի է նկատել որ նրա անունով ձեռագրերում պահպանվել են թե՛ պատճառներ, թե՛ լուծմունք-

¹ Տե՛ս կազմողի առաջաբանը, նույն տեղում, էջ 18:

² Ալիշան Ղ., Շնորհալի և պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 260-263:

³ Ակինյան Ն., Վարդան վարդապետ Հաղբատեցի, Մատենագրական հետազոտություններ, հտ. 1, Վիեննա, 1922, էջ 70:

⁴ Մուրադյան Կ., նշվ. աշխ., էջ 170:

ներ: Բացի այդ, նրա անունով պահպանված լուծմունքները տարբեր ձեռագրերում տարբեր բովանդակություն ունեն, ինչը վրիպել է ուսումնասիրողների աչքից: Օրինակ, Կ. Մուրադյանը հղում է ՄՄ 621 և ՄՄ 1480 ձեռագրերը՝ դրանցում պահպանված լուծմունքները վերագրելով Եղիա Ասորուն, սակայն լռության է մատնում այն փաստը, որ բովանդակային առումով դրանք խիստ տարբեր են, թեև որոշ տեղերում նմանություններ ունեն¹:

Ձեռագրային խուզարկումները ցույց են տալիս, որ Եղիա Ասորու անունով պատճառներ կամ լուծմունքներ հանդիպում են 437 (ԺԳ դ., թթ. 119ա-121բ), 621 (ԺԷ դ., թ. 215ա, և թթ. 259ա-263բ), 3937 (1370 թ., 63ա), 5254 (1280 թ., թթ. 145բ-161ա), 1480 (1617 թ., թթ. 109ա-112ա, և 112ա-132բ), նաև Վենետիկի 805 (1314 թթ., 6բ-19ա)² և 1358 (1744 թ., թթ. 22-70)³ ձեռագրերում:

Նշված ձեռագրերի մի մասում պահպանվել են միայն պատճառները, մյուս մասում՝ միայն լուծմունքները, կան նաև պատճառը և լուծմունքը համատեղ բովանդակող ձեռագրեր: Բացի այդ, որոշ ձեռագրերում պատճառը առանց հեղինակի մասին տեղեկանքի է, սակայն համընկնում է Եղիայի անունով հայտնի պատճառի հետ:

Միայն պատճառներն ունեն ՄՄ 437 (*Քրիստոս ծնեալ ճառին Եղիայի վարդապետի Ասորոց*), 3937 (*հեղինակի անունը չի նշվում*), 5254 (*Եղիայի ասացեալ Ասորոց վարդապետի պարձառ վերլուծութեան ի խաւս սրբոյն Գրիգորի Ասորուածարանի*) ձեռագրերը, 621 ունի պատճառը (*Պարձառ Քրիստոս ծնեալ ճառին Եղիայի վարդապետի Ասորոյ ասացեալ*) և լուծմունք: Նշյալ ձեռագրի լուծմունքի հետ համընկնում է ՄՄ 59 (ԺԳ-ԺԴ դդ., թթ. 42ա-46բ) ձեռագրի լուծմունքը, որն, ինչպես կտեսնենք, Եղիա Ասորունը չէ: ՄՄ ձեռ. 59 չունի պատճառը և որևէ նշում Եղիա Ասորու հեղինակ լինելու վերաբերյալ:

ՄՄ 1480 (*Եղիայի ուղղափառի և իմաստասիրի Ասորոյ մեկնութիւն ճառից մեծի հոեպորին Գրիգորի Ասորուածարանի*), Վենետիկի 805 (*Եղիայի ուղղափառի և իմաստասիրի մեկնութիւն ճառից մեծի հոեպորի Գրիգորի Ասորուածարանի*) և Վենետիկի 1358 (*Եղիայի ուղղափառի իմաստասիրի Ասորոց վարդապետի մեկնութիւն մեծի հոեպորին Գրիգոր Ասորուածարանի*) ձեռագրերը չունեն այն կարճառոտ պատճառը, որը կա մյուս ձեռագրերում: Այս ձեռագրերն իրենց բովանդակությամբ շատ մոտ են, իսկ ՄՄ 1480 և Վենետիկի

¹ Նույն տեղում, էջ 170, տողատ. 2:

² Տե՛ս Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, աշխ. Հ. Սահակ վրդ. Ճեմճեմյան, հտ. է, Տոնապատճառ-Ժողովածոյ, 1996, Վենետիկ, էջ 138:

³ Նույն տեղում, հտ. Ը, 1998, Վենետիկ, էջ 133:

1358 ձեռագրերն ուղղակի նույնական են, ասել է թե՛ նույն ժողովածոյի տարբեր դարերում արված ընդօրինակություններն են:

Նշյալ երեք ձեռագրերն էլ Եղիա Ասորու «Ի ծնունդն Քրիստոսի» ճառի լուծմունքից առաջ ունեն Դավիթ Քոբայրեցու հեղինակած նույն ճառի լուծմունքը՝ հայտնի «Սակս պիտոյից համառատ հաւաքումն ի Դավթայ» վերտառութիւյամբ: ՄՄ 1480 ձեռագրում Դավիթ Քոբայրեցու և Եղիա Ասորու լուծմունքների միջև կա մի ծավալուն պատճառ-լուծմունք (թիթ. 109բ-112ա), որն անկասկած Տոնասպարձատ ժողովածուից վերցված մի հատված է¹: ՄՄ 1480 և և Վենետիկի 1358 ձեռագրերի ընդօրինակողները, հետևելով իրենց ձեռքի տակ եղած գրչագրերին, ընդօրինակում են բնագրի գրչի՝ երկու հեղինակների՝ Դավթի և Եղիայի լուծմունքները մեկտեղելու պատճառաբանությունը, որն է մեծ սերը Գրիգոր Նազիանզացու «Ի ծնունդն Քրիստոսի» կամ «Քրիստոս ծնեալ» ճառի նկատմամբ²: Պատճառից զատ, գրեթե բոլոր ձեռագրերում լուծմունքը սկսվում է մի նախերգանով, որը կներկայացնենք իր տեղում:

Սակայն մինչ պատճառի և նախերգանի մանրակրկիտ ուսումնասիրությունն անցնելը, նախ քննենք Եղիա Ասորու անունով մեզ հասած լուծմունքների հարցը: Արդեն նշեցինք, որ 621 ձեռագրի լուծմունքը, որին նախորդում է Եղիա Ասորու անունով պահպանված պատճառը, չի համընկնում ՄՄ 1480 և Վենետիկի 805 և 1358 ձեռագրերում եղած և նույն հեղինակի անունով հայտ-

¹ Կիմ Մուրադյանն այս հատվածը համարում է պարզապես յուրօրինակ մի պատճառ:

² Հատվածը մեջբերում ենք ամբողջությամբ՝ հիմք ընդունելով ՄՄ 1480 ձեռագիրը և տալով Վենետիկի 1358 ձեռագրի հետ եղած տարընթերցումները. «Ջայս ճառս կրկին գրեցի, զի գերազանց կորովի (ի)մաստք սորա զարմացուցեալ/*varie lectio* զօրացուցեալ/ խանդակաթ արար զիս սիրով յոճ աստուածազօր գեր արփին պայծառութիւն իւր, զոր / *varie lectio* զորոյ/ հռետոր իմաստս բացադրեալ են երկու վեհքն, զԴավիթն ընդ որ անցաք օժանդակութեամբ սուրբ Հոգայն և զԵղիայ ուղղափառի իմաստասիրի Ասորոյ, զոր և յաջորդս ցուցանէ: Եւ արդ, աղաչեմ /*varie lectio* աղաչէ գրիչս եղկելի/, զի վասն կրկմանն մեղադիր մի լիցիք /*varie lectio* լիցիս/, զի սերն սորա բռնադատեաց կրկին գրել /1480 + և յիշել ի բարին Քրիստոս/:

Վենետիկի 1358 ձեռագրի գրիչը, որն ընդօրինակել է ձեռագիրը Երուսաղեմի Սուրբ Յակոբեանց վանքում, Երուսաղեմի մի եպիսկոպոս է, որի անունը ջնջված է հիշատակարանում: Հիշատակարանը շատ հետաքրքրական է: Գրիչը նշում է, որ «աւարտեցաւ գիրքս այս թարգմանացեալ ի լատինական լեզուէ ի հայ բարբառ ի վաղնջուց ժամանակաց և նարդենիս ի լոյս ածեցեալ և գրեցեա եղև ձեռամբ /// (անունը ջնջած է- Ա. Օ.) եպիսկոպոսիս սուրբ Երուսաղեմի ծառայի...»: Տեղեկություն է տալիս նաև այն օրինակի մասին, որից որ ընդօրինակել է, ասելով որ, «վասն թխտերաց պատառեալ գոլոյն, զի հին վաղուց էր գրեալ» ինքը սկզբում համառոտ է գրել, հետո խիղճն իրեն տանջել է, և նորից ամբողջութեամբ արտագրել է, այդ իսկ պատճառով շատ բացթողումներ կան (Cod Ven. 1358, թ. 1484-ի հիշատակարան), տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, նշվ. աշխ., հտ. Ը, 1998, Վենետիկ, էջ 137-138:

նի լուծմունքին (621 ձեռագիրը լուծմունքից առաջ ունի Եղիային վերագրվող պատճառը՝ հեղինակի մասին տեղեկանքով)¹:

Համեմատենք 621 ձեռագրի լուծմունքի (հմմտ. ՄՄ 59) և 1480 ձեռագրի լուծմունքի (հմմտ. Վենետիկ 805 և 1358) սկզբի հատվածները:

ՄՄ 621, թ. 259ա

Քրիստոս ծնեալ լինի:

Լծ. Քրիստոս անունն ոչ սոսկ մարդկութեանն է և ոչ յատուկ աստուածաութեանն, այլ Բոց միացելոց է անուն. ծնեալ ի Հօրէ յառաջ քան յաւիտեանս և լինի ի Կուսէ: Եւ դարձեալ ծնեալ ի Հօրէ և լինի ի սիրտս հաւտացելոց, ըստ այնմ՝ Ես յո՞ հանգեայց եթէ ոչ լի հեզս և ի խոնարհս):

Փառաւորեցէք:

Լծ. Զի չունի ոք տրիտուր հատուցանել Աստուծոյ, այն որ յառաջ քան զհաւիտեանս ծնունդ էր ի Հօրէ, եկն և եղև ծննդեամբ ի Կուսէ, բայց միայն յորդորէ փառաւորել զնա սրբութեամբ և պարկեշտութեամբ և բարի գործովք², ըստ այնմ՝ Տեսցեն զգործս ձեր բարիս և փառաւորեսցեն զՀայր ձեր [որ] յերկինս է:

Քրիստոս ի յերկնի[ց], յանդիպեցարուք:

Լծ. Այսինքն, ընդառաջ ելէք և հաւատով ողջունիցէք:

Քրիստոս ի վերայ երկրի:

Լծ. Զի մի ասիցեն, թէ յերկնից երբը զմարմինն:

ՄՄ 1480, թ. 112բ, Եղիա Ասորի

Քրիստոս ծնեալ լինի, փառաւորեցէք:

Լծ. Ոչ ասէ իբրև զանցեալ ինչ սոն աւետարանեմ, այլ որպէս զարդէն եղեալ զի և դուք հոգւոյ ակամբ ի ձեռն ճշմարիտ հաւատոյ որպէս թէ այժմ տեսանիցէք զնա բազմեալ ի մտուրսն բանից: Եւ որպէս անդ նոքա մարմնաւորապէս սպասաւորեցին դուք այժմ հոգևորապէս փառաւորեցէք, զի և հրեշտակք զնոյն բան ի Ծննդեանն ասացին:

Քրիստոս ի յերկնից:

Լծ. Թէպէտ և ծնաւ, այլ է ի յերկնից:

Հանդիպեցարուք:

Լծ. Հաւարով և բարի և առաքինի գործովք:

Քրիստոս ի վերայ երկրի:

Լծ. Լինելով նորա ի վերայ երկրի մեք բարձրանամք ի յերկինս և որպէս ի լեռն Սինա էջ և զՄովսէս եհան առ ինքն, և զի մի ասիցեն թէ ի յերկնիցն երբը զմարմինն:

¹ Սույն լուծմունքը պահպանվել է նաև ՄՄ 59-ում՝ առանց պատճառի:

² Այս և մնացած բոլոր ընդգծումները մերն են – Ա. Օ.:

Համեմատությունն ի հայտ է բերում, որ լուծմունքները տարբեր են, թեև կան որոշ նմանություններ: Մնում է պարզել, թե մեջբերված տեքստերից որ մեկն է Եղիա Ասորունը: Կ. Մուրադյանի կարծիքով Եղիա Ասորու անունով պահպանված լուծմունքների ամենամբողջական ձեռագիրը 1480 ձեռագիրն է, հետևաբար՝ այս ձեռագրում տեղ գտած բոլոր լուծմունքները, որոնք վերագրվում են Եղիա Ասորուն, իրականում էլ պատկանում են նրա գրչին¹: Այսինքն՝ երկրորդ սյունակի տեքստը Եղիա Ասորունն է:

Այդ դեպքում ինչո՞ւ է 621 ձեռագրի տեքստը վերագրվում նրան, ո՞ւմ հեղինակած գործն է այն, և եթե 1480-ի լուծմունքը Եղիա Ասորունն է, ապա ո՞վ է դրա թարգմանիչը: Առաջին հարցի պատասխանն ակնհայտ է. 621 ձեռագրի լուծմունքը Եղիա Ասորունը չէ: Այն վերագրվել է Եղիային միայն նրա համար, որ դրան նախորդում է վերջինիս մասին տեղեկանք ունեցող պատճառը, և գրիչն էլ նշում է Եղիայի անունը՝ որպես պատճառի հեղինակի, սակայն ոչինչ չի ասում լուծմունքի հեղինակի մասին, քանի որ սույն լուծմունքը, ամենայն հավանականությամբ, անանուն է եղել: Եվ այսպես, գրչի լուծմունքն ակամայից սովյալ լուծմունքի հեղինակ է կնքել Եղիա Ասորուն: Ավելին, սույն լուծմունքը առանց հեղինակային տեղեկանքի, բայց նախերգանով հանդերձ, հրատարակվել է Մխիթարյան հայրերի կողմից 1722 թ.² դրվելով Գրիգոր Աստվածաբանի «Քրիստոս ծնեալ» ճառի հայերեն թարգմանությունից անմիջապես հետո:

Մեր մյուս հարցադրումների պարզաբանման համար բանալի է ծառայում **Տոնապարձառ ժողովածուների որոշ խմբագրություններում ընդգրկված «Պատճառ «Քրիստոս ծնեալ» ճառի» միավորը:**

* * *

Մինչ **Տոնապարձառ ժողովածուների** օգնությամբ դիմելը, հարկ ենք համարում անդրադառնալ խնդրի նախորդ ուսումնասիրողներին, ովքեր այս ուղղությամբ որոշ աշխատանք են կատարել, բայց տեղեկությունների սուղության պատճառով բավարարվել են միայն ենթադրություններ անելով:

Ղ. Ալիշանը հիշատակում է Գրիգոր Աստվածաբանի «Քրիստոս ծնեալ»-ի մի լուծմունք, որի հեղինակն է Ներսես Շնորհալին: Ղ. Ալիշանի հաղորդած տեղեկությունների համաձայն Ներսես Շնորհալին Վարդան Հաղպատեցու խընդրանքով գրել է «Քրիստոս ծնեալ»-ի մի մեկնություն, Վարդան Հաղպատեցին էլ ընդարձակել է այն՝ դարձնելով լուծմունք, որն էլ պահպանվել է ձեռագրերում

¹ Մուրադյան Կ., նշվ. աշխ., էջ 179:

² Տե՛ս Գիրք և ճառ հոգեշահ, Կ.Պոլիս, 1722, էջ 29-46:

առանց հեղինակի մասին որևէ տեղեկանքի¹: Ն. Ակինյանն իր տարակուսանքն է հայտնում Ալիշանի հաղորդած տեղեկությունների կապակցությամբ, քանի որ Ալիշանը նախ չի նշում իր աղբյուրները², և երկրորդ, հնարավոր է, որ հիշյալ լուծմունքը շփոթում է Դավիթ Քոբայրեցու հեղինակած լուծմունքի հետ:

Հայտնի է, որ Դավիթ Քոբայրեցին գրել է Գրիգոր Աստվածաբանի «Քրիստոս ծնեալ» և «Առ որս» ճառաշարերի լուծմունքները, որոնք կարելի է գտնել նրա ինքնագիրը համարվող ՄՄ 5602-ում³ (հմմտ. Cod. Vien. 317): Հենց այս ձեռագրի հայտնի հիշատակարանում էլ Դավիթ Քոբայրեցին իր ուսուցիչ Վարդան Հաղպատեցու մասին գրում է, թե «ընթացեալ էր մերձ ի սահմանս Ասորոց և Կիւղիկեցոց, Վարդան մակաձայնեցելոյ, որոյ յոլով ժամանակս ի սակս քննութեան դեգերեալ առ դրան մեծի իմաստնոյ տեառն Ներսէսի Հայոց վերադիտողի, յորմէ մինչ եհասն առ մեզ, վերստին տեղեկացեալ իմ առ ի հաստատութիւն և ի լրումն առաջնոցն կրթութեանց, վստահ եղեալ հավանութեամբ նորին և այլոցս իմաստնոց, ձեռն ի գործ արկի ի մասնաւորս տարացոյց, մեկնութեան գրոցս երկոցունց մեծին սոփեստոսի Գրիգորի Աստուածաբանի, այնմիկ, որոյ սկիզբն Ի ծնունդն Քրիստոսի, և ոչք յայլ տնաւրինականսն Տեառն և միւսոյն ևս Առ որս բանին են պաճուճեալ...»⁴: Ն. Ակինյանի կարծիքով Ղ. Ալիշանը, հենվելով վերոբերյալ հիշատակարանի վրա, կարող էր թյուրիմացաբար Դավիթ Քոբայրեցու հեղինակած «Քրիստոս ծնեալ»-ի լուծմունքը վերագրել Վարդան Հաղպատեցուն, «նամանաւանդ, որ այս մեկնութիւնքն ձեռագրաց մեջ անանուն գիտէ»⁵:

Հ. Անասյանը, ելնելով սույն հիշատակարանից, գրում է, որ Վարդան Հաղպատեցին, ով հեղինակել է մի շարք պատճառներ, եղել է «Ասորոց և Կիւղիկեցոց» կողմերում (ամենայն հավանականությամբ իմացել է հունարեն և ասորերեն) և, հնարավոր է, որ այնտեղից բերել է նաև Եղիա Ասորու գործերը⁶: Հիշատակարանից պարզվում է, որ Դավիթ Քոբայրեցին Վարդան Հաղպատեցու խնդրանքով և հետևողությամբ է գրել իր լուծմունքները, ինչի համար էլ Կ. Մուրադյանը Քոբայրեցուն կոչում է «հմուտ հավաքագրող», որի աղբյուրներն

¹ Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 264-265:

² Ակինյան Ն., նշվ. աշխ., էջ 70-71:

³ Մեզ հետաքրքրող ճառը տե՛ս 5602, թթ. 1ա-13բ:

⁴ Սույն հիշատակարանի մասին մանրամասները տե՛ս Մուրադյան Կ., նշվ. աշխ., էջ 178, նաև նույն էջում տողատակ 21 և 22:

⁵ Նույն տեղում, էջ 71:

⁶ Անասյան Հ., Հայկական մատենագիտություն, Ե-ԺԸ դդ., հտ. Ա, Եր., 1959, էջ XV-XVI:

են եղել Եղիա Ասորին և Վարդան Հաղպատեցին¹: Դեռ ավելին, Քոբայրեցին հունարեն և ասորերեն չի իմացել, սակայն ծանոթացել է Գրիգոր Աստվածաբանի գործերին հենց Շնորհալի-Հաղպատեցի հեղինակների երկերի շնորհիվ:

Գալով Ներսես Շնորհալու և Վարդան Հաղպատեցու համագործակցությունը, նշենք, որ Գրիգոր Նյուսացու ճառերի պատճառներից մեկի տեղեկանքից² հայտնի է դառնում, որ Վարդան Հաղպատեցին Նյուսացու գործերի պատճառներին «տեղեկացեալ ի Ներսէս կաթողիկոսէ և յաւրինակի գրեալ զայս»³, այսինքն, հստակ է, որ Ներսես Շնորհալին գրել է Նյուսացու ճառերի պատճառներ: Ինչ վերաբերում է Նագիանզացու պատճառներին, ապա ըստ Կ. Մուրադյանի, Վարդան Հաղպատեցին միայն Ներսես կաթողիկոսից «Առ որս» ճառաչարի պատճառներն էր ստացել⁴:

* * *

Այժմ անդրադառնանք **Տոնապարձառ ժողովածուներին**, որոնք լույս են սփռում մեզ հուզող խնդիրների վրա: Այս առումով մասնավոր ուշադրություն է արժանի Վարդան Հաղպատեցու **Տոնապարձառի խմբագրությունը** զարդարող «Պատճառ «Քրիստոս ծնեալ» ճառի» միավորը:

Կ. Մուրադյանը մեջբերում է «Կնիք հաւատոյ»-ի առաջաբանում Կ. Տեր-Մկրտչյանի կարծիքը, թե 4139 թվակիր **Տոնապարձառի** հեղինակը Վարդան Հաղպատեցին է⁵, ով իր խմբագրած **Տոնապարձառում** ընդգրկել է Դավիթ Քոբայրեցու որոշ պատճառներ, ինչը, իբրև ցույց է տալիս, որ Քոբայրեցու ուսուցիչը Վարդան Հաղպատեցին է: Շնորհակալ լինելով մեծն գիտնականին այս արժեքավոր դիտարկման համար, ասենք, որ այսօր ապացուցված է, որ 4139 ձեռագիրը ոչ թե Վարդան Հաղպատեցու, այլ Վարդան Արևելցու **Տոնապարձառի խմբագրությանն** է պատկանում: Միևնույն ժամանակ հայտնի է նաև, որ 2021 ձեռագիրը Վարդան Հաղպատեցու կազմած **Տոնապարձառի խմբագրության** ուշ շրջանի ընդօրինակություն է, որի ճառերի մեծ մասն անցել է Վարդան Արևելցու **Տոնապարձառի խմբագրության** մեջ⁶:

¹ Մուրադյան Կ., նշվ. աշխ., էջ 179, 181-182:

² Հ. Անսայանը նշում է ՄՄ ձեռ. 437, թթ. 116ա-116բ, իսկ Կ. Մուրադյանը նաև ՄՄ ձեռ. 3937, թ. 59:

³ Տե՛ս Անսայան, Հ., նույն տեղում: Նաև, Մուրադյան Կ., նշվ. աշխ., էջ 171:

⁴ Մուրադյան Կ., նույն տեղում:

⁵ Կնիք հաւատոյ ընդհանուր Ս. Եկեղեցոյ յուղղափառ և ս. հոգեկիր հարցն մերոց դաւանութեանց, աշխ. Կ. Տեր-Մկրտչյանի, Էջմիածին, 1914, էջ CXII: Տե՛ս նաև Մուրադյան Կ., նշվ. աշխ., էջ 179, տողատակ 23:

⁶ Տե՛ս Վարդանյան Ռ., Հայոց տոնացույցը (4-18 դարեր), Եր., 1999, էջ 222:

Հայտնի է, որ Վարդան Հաղպատեցին կազմել է **Տոնապարձատի** նոր խմբագրություն, հավանաբար, Ներսես Շնորհալու խնդրանքով, կաթողիկոսին հաստատել է տվել այն և այդ խմբագրության մեջ ներառել է Գրիգոր Նազիանզացու ճառի կամ ճառերի որոշ պատճառներ: Այս մասին վկայում է ՄՄ 1897 ձեռագրի գրիչներից Խաչատուրը, որը, ըստ Փ. Անթաբյանի, եղել է Վարդան Հաղպատեցու աշակերտներից մեկը: Խաչատուրը գրում է, թե ինքը երկար է փնտրել Գրիգոր Նյուսացու երկերի պատճառները, «իսկ վարդապետն իմ Վարդան եցոյց ինձ գրեալ յիրում Տանապատճառին զոր ինք իսկ հաստատեալ էր ի տէր Ներսիսէ հայոց կաթողիկոսէ, և զնոյն գտեալ յարինակէ և գրեալ այսպէս՝ թէ Գրիգոր Աստուածաբան զերկոտասան ամ եկաց ի Բիւզանդիայ և մաքրեաց զքաղաքն յամենայն հերձուածողաց»¹:

Իրոք, Հաղպատեցին **Տոնապարձատի** իր խմբագրության մեջ ընդգրկել է «Պատճառ «Քրիստոս ծնեալ» ճառին» միավորը, որը հետագայում որոշ խմբագրական միջամտություններով անցել է **Տոնապարձատի** Վարդան Արևելցու և Հովհաննես Գանձակեցու խմբագրությունների մեջ, և որի «պատճառային» մասից մեծապես քաղել է Գրիգոր Աբասյանը «Գիրք պատճառաց»-ում Գրիգոր Նազիանզացու ճառերի պատճառները շարադրելիս:

«Պատճառ «Քրիստոս ծնեալ» ճառին» տոնապատճառային միավորը հեղինակային գործ է՝ կազմված ծավալուն պատճառից և լուծմունքից: Նախ քննենք այս միավորի լուծմունքի հատվածը, ապա անցնենք «պատճառային» մասին:

Տեքստային համեմատությունը ցույց է տալիս, որ Վարդան Հաղպատեցու **Տոնապարձատում** պահպանված «Պատճառ «Քրիստոս ծնեալ» ճառի» լուծմունքային մասն իրականում մեզ հետաքրքրող անանուն լուծմունքի մի դրվագի ընդլայնված տարբերակն է (ՄՄ ձեռ. 621 և 59):

ՄՄ 621, թ. 259ա, Անանուն

Քրիստոս ծնեալ լինի:

Լծ. Քրիստոս անունն ոչ սոսկ

մարդկութեանն է և ոչ յարուկ աստուածութեանն, այլ Բ.ոց միացելոց է անուն. ծնեալ ի Հօրէ հառաջ քան յաւիտեանս և լինի ի Կուսէ: Եւ դարձեալ,

ՄՄ 2021, թթ. 42բ-43ա, Վարդան

Հաղպատեցու Տոնապարձատ

Քրիստոս ծնեալ լինի, փառաւորե-

Լծ. Վասն զի բազմութիւնք հրէից և հեթանոսաց և հերձուածողաց ժողովեալ էին և կսկծելի էր նոցա լսել զանունն Քրիստոսի, զի Քրիստոս

¹ Տե՛ս ՄՄ 1897, թ. 108ա: Նաև Անթաբյան Փ., Վարդան Արևելցի, հտ. Ա, Եր., 1987, էջ 238: Նաև, Վարդանյան Ռ., նշվ. աշխ., էջ 222:

ծնեալ ի Հօրէ և լինի ի սիրտս հաւարացելոց, ըստ այնմ՝ Ես յո՞հանգեայց եթէ ոչ լի հեզս և ի խոնարհս):

Փառաւորեցէք:

Լծ. Զի չունի որ տրիտուր հատուցանել Աստուծոյ, այն որ յառաջ քան զհաւիտեանս ծնունդ էր ի Հօրէ, եկն և եղև ծննդեամբ ի Կուսէ, բայց միայն յորդորէ փառաւորել զնա սրբութեամբ և պարկեշտութեամբ և բարի գործովք, ըստ այնմ՝ Տեսցեն զգործս ձեր բարիս և փառաւորեսցեն զՀայր ձեր [որ] յերկինս է (Մատթ. Ե. 16):

անունն աւծութեան անուն է, և ասի ոչ աստուածութեան միայն և ոչ մարդկութեան յարուկ, այլ միացելոյ աստուածութեան և մարդկութեան և եղելոյ որպէս է աւծն, այսինքն՝ աւծեալ Աստուած արար, որ և Դաւիթ ասէ. ‘Վասն այսորիկ աւծ գքեզ Աստուած, Աստուած քո լիւղով ուրախութեան]: Եւ յԵրեմիաս «Հոգի երեսաց մերոց Տէր և աւծեալ»: Երկրորդ բան, զի ամենայն, որ քրիստոնեայ է, աւծեալ կոչի մկրտութեամբ աւազանին որդեգրեալ Հայրն երկնաւորի և ժառանգակից Քրիստոսի՝ աւծեալ սուրբ եղովն և Հոգւով Սրբով:

.....

Եւ դարձեալ՝ Քրսիտոս ծնեալ լինի]: Ամի ամի յայսմ աւուր ի սիրտս և ի միտս հաւարացելոց:

.....

Եւ ապա ասէ՝ փառաւորեցէք: Եւ որպէս ասէս, զի նա յանկարատ է և լիապէս ունի զփառաւորութիւն: Այո, ասէ, զՆա փառաւորեցէք աստուածահաճոյ վարիք և արհնութեամբ՝ ըստ առաքելոյ, որպէս թէ զամենայն ինչ ի փառս Աստուծոյ առնել (Ա. Կոր. Ժ. 31): Եւ Տէրն ասէ. Տեսցեն զգործս ձեր բարիս և փառաւորեսցեն զՀայր ձեր, որ յերկինս է (Մատթ. Ե. 16):

Այսպիսի օրինակները շատ-շատ են, և գալիս են փաստելու, որ Վարդան Հաղպատեցին իր Տոնապարճատում ընդգրկել և էլ ավելի է ընդարձակել ՄՄ 621 և 59 ձեռագրերում պահպանված ու նաև Մխիթարյանների կողմից հրատարակված անանուն լուծմունքից որոշ հատվածներ: Ուստի, դժվար չէ եզրակացնել, որ նշված անանուն լուծմունքը Ներսես Շնորհալի-Վարդան Հաղպատեցի գիտական լծակիցների գրչի արգասիքն է: Թերևս այն Ներսես Շնորհա-

լու գրած մեկնությունների հիման վրա Հաղպատեցու շարադրած լուծմունքն է: Այդ պատճառով սույն անանուն լուծմունքը պայմանականորեն կկոչենք Շնորհալու- Հաղպատեցու լուծմունք:

Այնուամենայնիվ այս լուծմունքում առկա են Եղիա Ասորու լուծմունքի հետ- քերը, թեև նշված լուծմունքներն իրարից խիստ տարբեր են: Ինչպես վերը տե- սանք, Վարդան Հաղպատեցին Հյուսիսային վարդապետների կողմից ուղարկվել էր Ասորիքի կողմերը, և կարող էր իր հետ բերած լինել Գրիգոր Նազիանզացու ճառերի Եղիա Ասորու հեղինակած պատճառներն ու լուծմունքները: Վարդան Հաղպատեցին իսկապես ծանոթ էր Եղիա Ասորու լուծմունքին և օգտվել է դրա- նից իր լուծմունքը շարադրելիս: Այս փաստն արտացոլվել է թե առանձին լուծ- մունքում, թե տոնապատճառային միավորի լուծմունքային հատվածում:

<p>ՄՄ 1480, թ. 112բ, Եղիա Ասորի</p> <p>Քրիստոս ի յերկ- նից: Լծ. Թէպէտ և ծնաւ, այլ է ի յերկնից: Հանդիպեցարուք: Լծ. Հաւարով և բարի և առաքինի գործովք:</p> <p>Քրիստոս ի վերայ երկրի: Լծ. Լինելով նորա ի վերայ երկրի մեք բարձրանամք ի յերկինս և որպէս ի լեռն Սինա էջ և զՄովսէս եհան առ ինքն, և զի մի ասիցեն թէ ի յերկնիցն երեր զմարմինն:</p>	<p>ՄՄ 621, թ. 259ա [Շնորհալի-Հաղպատեցի]</p> <p>Փառաւորեցէք: Լծ. ... բայց միայն յորդորէ փառաւորել զնա սըրբութեամբ և պարկեշտութեամբ և բարի գործովք, ըստ այնմ՝ Տեսցեն զգործս ձեր բարիս և փառաւորեսցեն զՀայր ձեր [որ] յերկինս է:</p> <p>Քրիստոս ի յերկնից], յանդիպեցարուք: Լծ. Այսինքն, ընդառաջ ելէք և հաւարով ողջունիցէք:</p> <p>Քրիստոս ի վերայ երկրի: Լծ. Զի մի ասիցեն, թէ յերկնից երեր զմարմինն:</p>	<p>ՄՄ 2021, թ. 43ա , Վարդան Հաղպատեցու Տոնապարձառ</p> <p>Քրիստոս ի վերայ երկրի՝ բարձրացարուք: Լծ. Զի մի բերանաբաց լիցին հերձուածողքն, թէ՛ յերկնիցն երեր զմարմինն, և կամ թէ՛ առ աշաք մարդ երևեցաւ: Վասն որոյ ասէ ի վերայ երկրի] շրջելն զամս Լ., ճշմարիտ մարդ կատարեալ՝ ըստ մարգարէին, որ ասէ. Յետ այսորիկ յերկրի երևեսցի և ընդ մարդկան շրջեսցի]:</p>
---	---	--

Բերված համեմատությունը վեր է հանում նմանությունները: Հայտնի է, որ Հաղպատեցին տիրապետում էր ասորերենին և հունարենին և կարող էր ծանոթ լինել ոչ միայն Եղիայի լուծմունքին, այլև Գրիգոր Աստվածաբանի ճառերի

հունարեն բնագրերին և ասորերեն թարգմանություններին և իր լուծմունքը գրելիս օգտվել դրանցից: Այս հանգամանքի օգտին է խոսում Վարդան Հաղպատեցու տոնապատճառային լուծմունքում տեղ գտած մի բացատրություն:

«Երգեցէ՛ք Տեառն երգ նոր, [երգեցէ՛ք Տեառն ամենայն երկիր]: Լծ. Թողեալ ոճ բանիցն ի վկայութիւն մարգարէին գայ և ըստ դաւթեան հրամանին հորդորէ՞¹ զամենեսեան արհնեւ: Ի յունացն և յասորոցն ոչ է «նոր երգ» առած կամ փոխիլ այլ «ամենայն երկիրն», իսկ մերոց թարգմանչացն եղեալ է խորհրդաբար. զի նոր է արքայն ծնեալ, նոր երգ պարտ է մատուցանել» (ՄՄ ձեռ. 2021, թթ. 43բ-44ա):

Փաստորեն, Վարդան Հաղպատեցին բացատրում է, որ Գրիգոր Աստվածաբանի «Ի ծնունդն Քրիստոսի» ճառում «նոր երգ» արտահայտությունը հունարեն և ասորերեն տարբերակներում չկա (հուն.՝ «*ἄσατε τῷ κυρίῳ, πᾶσα ἡ γῆ.*»)² և ավելացվել է միայն հայ թարգմանիչների կողմից³: Հետաքրքրական է, սակայն, որ հայերեն թարգմանության մեջ կա միայն «երգեցէ՛ք Տեառն ամենայն երկիր» տողը՝ առանց «նոր երգ»-ի⁴, իսկ Շնորհալու-Հաղպատեցու լուծմունքում (ՄՄ ձեռ. 621, 59) ոչ միայն «նոր երգ» արտահայտությունը, այլև «երգեցէ՛ք Տեառն ամենայն երկիր» տողը, որի շուրջ բացատրություններ է տալիս Հաղպատեցին, ընդհանրապես բացակայում է⁵:

Ինչո՞ւ է Հաղպատեցին բաց թողել մի ամբողջ տող, ինչո՞ւ չի անդրադարձել այս հարցին այնպես, ինչպես անդրադառնում է տոնապատճառային իր լուծմունքում: Կամ, որտեղից է վերցրել, որ հայ թարգմանիչները ավելացրել են «երգ նոր» արտահայտությունը, եթե հայերեն թարգմանությունը չունի այն: Մեր պատկերացմամբ տողի բացակայությունը գալիս է Ներսես Շնորհալու մեկնությունից: Վարդան Հաղպատեցին էլ լուծմունքի տեսք տալով Շնորհալու մեկնությանը, ուշադրություն չի դարձրել տարբերություններին: Հետագայում, իր իսկ լուծմունքն ընդարձակելիս և տոնապատճառային ձևաչափին հարմարացնելիս, նկատել է այս տողի բացակայությունը և ընդգրկել նաև դրա լուծմունքը: Ավելին, մեր կարծիքով «երգ նոր» արտահայտությունը հենց ինքը՝

¹ Վերականգնված է ըստ ՄՄ ձեռ. 4139-ի, թ. 37ա:

² Gregorii Theologi, PG, t. 36, Oratio 38, p. 312.

³ Քանի որ ձեռ. 2021-ը ամենայն հավանականությամբ 13-րդ դարի ընդօրինակություն է, հնարավոր է, որ այս արտահայտությունը հետագա ընդօրինակողի ընդմիջարկությունը լինի: Պետք է նշել, որ ընդգծված հատվածը կա նաև Վարդան Արևելցու տոնապատճառում, և հնարավոր է այստեղից անցած լինի Հաղպատեցու տեքստի ուշ ընդօրինակության մեջ: Այդ դեպքում մեր ուսումնասիրության որոշ դրույթներ պետք է փոփոխվեն:

⁴ Տե՛ս Գիրք և ճառ հոգեշահ, նշվ. աշխ., էջ 7:

⁵ Նույն տեղում, էջ 29-30:

Հաղպատեցին է հավելել (քանի որ ասորերենում և հունարենում այդ բառերը չկան) բացատրելով դրա անհրաժեշտությունն ու խորհուրդը՝ «զի նոր է արքայն ծնեալ նոր երգ պարտ է մատուցանել»:

Վարդան Հաղպատեցու տոնապատճառային միավորը տեղ է գտել նաև Վարդան Արևելյու **Տոնապարձատի** խմբագրության մեջ: Արևելյու տոնապատճառային միավորն ավելի ընդարձակ է: Հնարավոր է, որ նա օգտվել է Հաղպատեցու **Տոնապարձատի** մի ավելի վաղ և քիչ խմբագրված օրինակից, կամ էլ ինքն է ընդարձակել որոշ դրվագների մեկնությունները՝ ձեռքի տակ ունենալով նաև Շնորհալու-Հաղպատեցու լուծմունքը: Բերենք մի համեմատական օրինակ.

ՄՄ 621, թ. 259ա [Շնորհալի-Հաղպատեցի]	ՄՄ 2021, թթ. 42բ-43ա Վարդան Հաղպատեցու Տոնապարձատ	ՄՄ 4139, թթ. 35ա-36բ Վարդան Արևելյի Տոնապարձատ
Քրիստոս ծնեալ լինի:	Քրիստոս ծնեալ լինի՝ փառաւորեցէք:	Քրիստոս ծնեալ: Լծ. Քրիստոսոզ անուն
Լծ. Քրիստոս անունն ոչ սոսկ մարդկութեանն է և ոչ յատուկ աստուածութեանն, այլ Բոց միացելոց է անուն. ծնեալ ի հօրէ հառաջ քան յաւիտեանս և լինի ի Կուսէ:	Վասն զի բազմութիւնք հրէից և հեթանոսաց և հերձուածողաց ժողովեալ էին և կսկծելի էր նոցա լսել զանունն Քրիստոսի, զի «Քրիստոս» անունն արձուցեալ անունն է, և ասի ո՛չ աստուածութեան միայն և ո՛չ մարդկութեան յատուկ, այլ միացելոյ աստուածութեան և մարդկութեան և եղելոյ որպէս է արձն, այսինքն՝ արձեալ Աստուած արար, որ և Դաւիթ ասէ. Վասն այսորիկ արձ գրեզ Աստուած, Աստուած քո իւղով ուրախութեան] (Սաղ. ԽԴ. 8, Եբր. Ա. 9): Եւ յԵրեմիաս՝ Հոգի երեսաց մերոց Տէր և արձեալ (Երեմ. Դ. 20):	Լծ. Քրիստոսոզ անունն է, ոչ սոսկ մարդկութեան ասի և ոչ յատուկ աստուածութեան, այլ միաւորութեանն, քանզի արձեալ զմարդկութիւն է արձ աստուածութեամբն: Եւ վասն այսորիկ «քրիստոս» կոչի, զի արձեալ է աստուածութեամբն մարդկութիւնն: Դարձեալ՝ կսկծելի էր հրէիցն և հերձուածողացն յիշելն զանունն Քրիստոսի և ահարկու դիւաց, վասն այսորիկ ասէ. Քրիստոս ծնեալ լինի: Այսինքն՝ է արձեալն Աստուծոյ, որ է արձ զմեզ եղով սրբով այսինքն՝ Հոգի երեսաց մերոց՝ Տէր Քրիստոս (Ողբ Դ. 20): Վկայեաց այսմ և Դաւիթ՝
Եւ դարձեալ ծնեալ ի հօրէ և լինի ի սիրտս հաստացելոց, ըստ այնմ Ես յո հանգեայց եթէ ոչ ի հեզս և ի խոնարհս]:		

Երկրորդ բան, զի ամենայն, որ քրիստոնեայ է, ամենալ կոչի՝ մկրտութեամբ աւազանին որդեգրեալ Հաւրն երկնաւորի և ժառանգակից Քրիստոսի՝ ամենալ սուրբ եղովն և Հոգով Սրբով:

Քրիստոս ծնեալ լինի՝ հրեշտակական է, փառաւորեցէք՝ հրամայական, այսինքն՝ հաւանական: Քրիստոս՝ ծնեալ ի Հաւրէ, լինի ի Կուսէ, զոր փառաւորել պարտ էր բանիւ և սուրբ վարիւք և ո՛չ լեզուագարեք:

Եւ դարձեալ՝ Քրիստոս ծնեալ [լինի]: Ամի ամի յայսմ աւուր ի սիրտս և ի միտս հաւատացելոց: Եւ թէ զթագաւորն ակնարկէ, զի նոր իսկ էր մկրտել ի Քրիստոս, և կամ զամենայն հաւատացեալս, որք ծնանիմք ի ջրոյ և ի Հոգւոյ, և ամանիմք աստուածութեամբն և զզենումք, որպէս ասէ առաքեալ Քրիստոս, ասէ, ի վերայ հիման առաքելոց և մարգարէից եղ սկիզբն բանին իւրոյ, զի «Քրիստոս» անունն յաճախապէս յիշատակի յառաքելոց և ի մարգարէից: Զի մարգարէքն զամենալն գուշակե-

ասելով Վասն այսորիկ ամեզքեզ Աստուած, Աստուած քու եղով ուրախութեամբ առաւել քան զընկերս քո (Սաղմ. ԽԴ. 8): Զի որ քրիստոնեայ է՝ նաև ամենալ է մկրտութեամբ և Հոգովն Սրբով: Անուանէին և առ արինաւորսն ամենալք մարգարէքն և քահանայքն և թագաւորքն: Բայց նոքա մարմնական եղով ամենալ լինէին և անուամբ միայն կոչէին ամենալ իսկ մեք ոչ այնպէս, այլ արդեամբք և ճշմարտութեամբք: Զի որք ի Քրիստոս մկրտեցաք, զՔրիստոս զգեցաք (Գաղ. Գ. 27), զի որպէս մարդկութիւն միացեալ ընդ Բանին Աստուծոյ ամենալ անուանի, այսպէս կոչի քրիստոնեայն, քանզի մարմին և անդամք են Նորա, ըստ առաքելոց: Եւ որպէս մարգարէքն վկայեցին ամօթեանն Քրիստոսի երայական ձայնիւ, նոյնպէս և առաքեալքն Տէր և Աւծեալ քարոզեցին՝ ասելով Տէր և Աւծեալ զՆա Աստուած արար (Գործք Բ. 36):

Դարձեալ՝ «Քրիստոս» կոչեաց զՆա, որ միաւորութեան է անուն, զի Անանուն Աստուած եկն ի մարդկութիւնս և բազմանուն եղև:

ցին և առաքելալքն զՔրիստոսն քարոզեցին, նորա՛ զխորհուրդ բանին, և սորա՛ զկատարումն իրին:

Եւ ապա ասէ՛ փառաւորեցէք: Եւ որպէս ասէս, զինա յանկարատ է և լիապէս ունի զփառաւորութիւն: Այո, ասէ, զՆա փառաւորեցէք աստուածահաճոյ վարիւք և արհնութեամբ՝ ըստ առաքելոյ, որպէս թէ զամենայն ինչ ի փառս Աստուծոյ առնել (Ա. Կոր. Ժ. 31): Եւ Տէրն ասէ. Տեսցեն զգործս ձեր բարիս և փառաւորեսցեն զՀայր ձեր, որ յերկինս է (Մատթ. Ե. 16):

Բայց աստուածութեան բնութեանն ո՛չ որ կարէ ասել անուն, այլ զինչ ասացեալ լինի, պարագայք են միայն: Փառացն են անուն և տնարէնութեանն խորհրդոյ, վասն որոյ ասէ. Քրիստոս ծնեալ լինի, զի աւելի ցաւեսցեն հրէայքն անհաւատք: Զի առնոսա յայտնի էր անունս այս՝ ի մարգարէիցն կանխաւ գուշակել, որում դեռևս ական ունին մոլորեալքն դերաքրիստոսին: Իսկ մեզ առաւել խնդութիւն է յիշել զանունն Քրիստոսի՝ փրկողին մերոյ, զի հանապազտան է ի միտս հաւատացելոց:

Քրիստոս ծնեալ: Այսինքն՝ ի հարէ յառաջ, քան զամենայն յաւիտեանս, անսկզբնապէս լինի ի Կուսէ, ըստ այնմ, թէ. Առաքեաց Աստուած զՈրդին Իւր, որ եղև ի կնոջէ (Գաղ. Դ. 4), և թէ. Կոյսն յղասցի և ծնցի որդի (Մատթ. Ա. 23), և թէ. Բանն մարմին եղև, և բնակեաց ի մեզ (Յովհ. Ա. 14):

Քրիստոս ծնեալ լինի: Յայսմ ատուր ասէ լինել զԾնունդն, զի մի և նոյն է Յայտնութիւն և Ծնունդն որպէս վերնագիրն ցուցանէ. Յայտնութիւն ասելով՝ ի

Ծնունդն սկսանի:

Քրիստոս ծնեալ լինի, որպէս այնաւր ի Կուսէն, այսաւր՝ ի մէջ եկեղեցոյ, քանզի ծնեալ լինի նորոգապէս ամի ամի ի միտս և ի սիրտս հաւատացելոց, որք խորհրդեամբ և տանուտ ուրախութեամբ զուարճացեալ՝ բերկրին և ցնծան յանձինս իւրեանց՝ մարմնով և հոգով:

Եւ դարձեալ՝ վասն թագաւորին ասէ: Այսաւր Քրիստոս ծնեալ յանձին քում, զի Թէոդոս թագաւորն նորոգ մկրտեալ էր յայնմ ժամանակի: Եւ այլ բազում հաւատացեալք մկրտեցան յայնմ աւուր, ծնեալք վերստին ի ջրոյ և ի հոգոյ, աւծեալք հոգով և զգեցեալք զՔրիստոս:

Դարձեալ՝ ասելովն Քրիստոս ծնեալ լինի՝ ի վերայ հիման առաքելոց և մարգարէից եղ զսկիզբն Բանին, զի մարգարէքն զԱւծեալն զուշակեցին և առաքեալքն՝ զՔրիստոս քարոզեցին, նոքա՝ զխորհուրդ իրացն, և սոքա՝ զկատարումն իրին:

Դարձեալ՝ ասելն Քրիստոս ծնեալ լինի. հրաշական է բանս՝ ի զարմացումն ածելով զլսաւղսն, թէ անպարագրելին Աստուած, այն,

որ կրէ զամենայն բանիւ զարութեան իւրոյ Ամենակալն և մեծանունն Տէր, որ ասաց. Զերկինս և զերկիրես ընում (Երեմ. ԻԳ. 24) և միւս մարգարէն ասէ. Լի են երկինք և երկիր փառաբնորա, և ի ձեռն նորա են ամենայն տիեզերք (Հմմտ. Ես. 2. 3): Արարիչն հրեշտակաց և բոլոր գոյից արարածոց՝ իմանալեաց և զգալեաց, այսարածին մանուկ եղև, պատեցաւ ի խանձարուրս և եղաւ ի մտուր՝ դիելով կաթն ի ստեանցն Մարիամայ, յորմէ սարսեն սէրոբէքն և դողան քէրովբէքն, գգուեցաւ ի գիրկս Կուսին: Եւ վասն ամենայն տնարինական խորհրդոցն ի հրաշումն հիացումն ածեալ՝ զբանն ասէ. Քրիստոս ծնեալ լինի:

Փառաւորեցէք: Եւ ապա ասէ՝ փառաւորեցէք: Եւ ապա ասէ՝ փառաւորեցէք: Եւ որպէս ասէս, զինա յանկարատ է և լիապէս ունի զփառաւորութիւն: Այո, ասէ, զՆա փառաւորեցէք՝ աստուածահաճոյ վարիք և արհնութեամբ՝ ըստ առաքելոյ, որպէս թէ զամենայն ինչ ի փառս Աստուծոյ առնել (Ա. Կոր. Ժ. 31): Եւ Տէրն ասէ. Տեսցեն զգործս ձեր

Եւ ապա հրամայական բանիւ ի վերայ ածէ՝ Փառաւորեցէք, քանզի ասելն՝ փառաւորեցէք՝ հրամայական է: Զի երախտեացս այս մեծի տրիտուր փոխարանի այլ ինչ ոչ ունիմք հատուցանել Աստուծոյ, բայց միայն արհնութիւն և փառաբանութիւն սրբութեամբ անձին և մաքրութեամբ սրտի: Վասն այսորիկ ասէ՝ փառաւորեցէք:

և պարկեշտու- բարիս և փառաւորեցեն թեամբ և բարի զՀայր ձեր, որ յերկինս է գործովք: (Մատթ. Ե. 16):

Եւ որպէ՛ս ասես զայդ հարցանէ որ ցնա, քանզի Նա անկարատ և լիապէս ունի զփառաւորութիւն: Այո, ասէ, զՆա փառաւորեցէք աստուածահաճոյ վարուք և ճշմարիտ առաքինութեամբ, ըստ առաքելական հրամանին. Զամենայն ինչ առնել ի փառս Աստուծոյ (Ա. Կոր. Ժ. 31):

Եւ դարձեալ՝ Փառաւոր արարէք զԱստուած ի մարմինս ձեր (Ա. Կոր. Զ. 20): Եւ Տէրն հրամայէ. Տեսցեն զգործս ձեր բարիս և փառաւորեցեն զՀայր ձեր, որ յերկինս է (Մատթ. Ե. 16):

Եւ դարձեալ՝ տանախմբութեամբ ասէ փառաւորել՝ ձայնակից և երգակից լինելով հրեշտակացն, որք ասէին. Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն (Ղուկ. Բ. 14):

Հետաքրքրական է, որ Դավիթ Քոբայրեցին «Ի ծնունդն Քրիստոսի» ճառի իր հեղինակած «Սակս պիտոյից» լուծմունքում բերում է մի հատված ու տալիս դրա մեկնությունը.

Պարտ է լնուլ վերին աշխարհին: Լծ. Ի յունաց և ասորոց. Քրիստոս ասէ մի հակառակիք, եթէ վասն էր օրէնք բնութեանն քակտին, զի պարտէ լնուլ վերին աշխարհին նոր ծննդեամբ աւագանին: Քրիստոս ասէ՝ օ՛ւ, արիք, գնասցուք աստի, դուք մի հակառակօքն վարիցիք ի կորուստ (ՄՄ ձեռ. 1480, թ. 106ա):

Իսկապես Գրիգոր Աստվածաբանի «Ի ծնունդն Քրիստոսի» միավորի հայերեն թարգմանությունը չունի այս տողը¹ (հուն.՝ Πληρωθῆναι δεῖ τὸν ἄνω

¹ Տե՛ս Գիրք և ճառ հոգեշահ, նշվ. աշխ., էջ 8:

κόσμοι¹): Այն չկա Հովհաննես Սարկավազի «Ի ծնունդն Քրիստոսի» հնագույն լուծմունքում, ինչպես և Շնորհալու-Հաղպատեցու լուծմունքում²: Այն չի հիշում նաև Հաղպատեցին տոնապատճառային իր լուծմունքում, որն ավարտվում է Գրիգոր Աստվածաբանի «Ջի մանուկ ծնաւ, որդի եւ տուաւ մեզ» տողի մեկնությամբ, որից առաջ հունարենն ու ասորերենն ունեն «պարտ է լնուլ վերին աշխարհին» տողը:

Հայտնի է, որ Քոբայրեցին ասորերեն և հունարեն չի իմացել: Հարց է առաջանում. եթե հայերեն թարգմանությունը չունի այս հատվածը, ապա ո՞ւմից է օգտվել Քոբայրեցին: Անկասկած Եղիա Ասորու լուծմունքի հայերեն թարգմանությունից, որի հետ հստակ են աղերսները.

Պարտ է լնուլ վերին աշխարհին: Լծ. Քանգի ծնանելն Քրիստոսի ի Կուսէն և կրելն զամենայն կիրս մարդկութեան բաց ի մեղաց սակս այնորիկ եղև, զի վերին աշխարհն լցցի երկրայնօքս, յորժամ ծնանիմք սուրբ աաւզանաւն: Քրիստոս հրամայէ՝ մի հակառակել, հրամայէ զայս յասելն զաշակերտսն. «Արիք, գնասցուք աստի» (Մարկ. ԺԴ 42): Մի՛ դու ի Գալիլիէ ի Հրէաստան կարծիցես, այլ ի յերկրէս ի վերին աշխարհն (Եղիա Ասորի, ՄՄ ձեռ. 1480, թ. 113ա):

«Ի յունաց և ասորոց» արտահայտությունը հետագայի հավելում է, քանի որ Քոբայրեցու ինքնագրում այդ արտահայտությունը չկա³: Ուրեմն, Քոբայրեցին, պարզապես օգտվելով Եղիա Ասորու լուծմունքներից, իր լուծմունք է ներմուծել մի հատված, որը Գրիգոր Նազիանզացու հայերեն թարգմանության մեջ չկա, իսկ հետագայում խմբագիրներից կամ ընդօրինակող գրիչներից մեկը, գիտենալով այդ փաստի մասին, բացատրել է, որ տվյալ հատվածը կա միայն հունարեն և ասորերեն տեքստում:

Իսկ ո՞վ էր Եղիա Ասորու լուծմունքի թարգմանիչը: Մեր պատկերացմամբ Եղիա Ասորու լուծմունքների, նաև մեզ հետաքրքրող «Քրիստոս ծնեալ»-ի լուծմունքի թարգմանիչը Վարդան Հաղպատեցին է: Եթե Եղիա Ասորու գործերը նա էր բերել Հայաստան, ապա տրամաբանական է, որ հենց ինքն էլ դրանք թարգմանել և օգտագործել էր իր լուծմունքը գրելիս:

Մենք կարող ենք թույլ տալ ևս մի վարկած, այն է՝ Եղիա Ասորին իր գործերը գրել է հայերեն կամ հենց ինքն է թարգմանել հայերենի, թեև նրա գործերը մշտապես հիշվում են որպես թարգմանական գրականության նմուշներ: Հայտնի է, որ 12-13-րդ դդ. Կիլիկիայում կիրառություն է գտնում թարգմանա-

¹ Gregorii Theologi, PG, t. 36, Oratio 38, p. 313.

² Գիրք և ճառ հոգեշահ, նշվ. աշխ., էջ 31-32:

³ Տե՛ս, ՄՄ 5602, թ. 1ա:

կան մի նոր եղանակ, որի սկզբնավորումը կապվում էր Գրիգոր Վկայասերի գործունեության հետ¹: Թարգմանությունը կատարվում էր թարգմանիչ-խմբագիր համագործակցության միջոցով, այսինքն՝ սկզբում արվում էր տողացի թարգմանություն լեզվի կրողների՝ ասորիների կամ հույների կողմից, ապա խմբագրվում և ոճավորվում էր մեկ ուրիշ՝ հիմնականում խիստ հեղինակավոր անձի կողմից: Այսպես, «Մեկնություն սրբոյ Ավետարանին, որ ըստ Յովհաննու» երկը թարգմանվել է ԺԲ դարում՝ Գրիգոր Վկայասերի պատվերով Անդրէաս ասորի քահանայի աշխատասիրությամբ, Հակոբ Սրճեցու «Խաչելութեան ճառը»՝ ոմն Սահակ կամ Իսահակ ասորի քահանայի կողմից 1151 թ. և խմբագրվել-ոճավորվել Ներսես Շնորհալու կողմից², իսկ Սարգիս Զորավարի վարքը թարգմանվել է Միքայել Ասորու կողմից և խմբագրվել Ներսես Շնորհալու կողմից³ և այլն: Ուստի, հնարավոր է, որ Եղիա Ասորին գրել կամ տողացի թարգմանել է իր երկերը հայերեն, հետո Վարդան Հաղպատեցին խմբագրել-ոճավորել է դրանք: Այնուամենայնիվ, դժվար է սպառնիչ պատասխան տալ այս հարցին առանց հստակ տեղեկություն ունենալու: Բանն այն է, որ Գրիգոր Աստվածաբանի ճառի ասորերեն թարգմանության մեջ «Երգեցէք Տեառն ամենայն երկիր» տողում բացակայող «երգ նոր» բառերը, որոնք Հաղպատեցու բացատրությամբ «հայ թարգմանիչները», իսկ մեր կարծիքով՝ հենց ինքն է հավելել, հայտնվել են Եղիա Ասորու լուծմունքի հայերեն թարգմանության մեջ⁴: Փաստորեն, Հաղպատեցին ինքն իրեն կոչում է «թարգմանիչ», որ այս շրջանի համար կարող էր նշանակել նաև տեքստը հայացնող խմբագիր:

Ինչ վերաբերում է «Քրիստոս ծնեալ»-ի Եղիա Ասորու անունով մեզ հասած համառոտ պատճառին, ապա մեր համոզմամբ այն ոչ թե Եղիա Ասորունն է, ի տարբերություն այս ճառաչարի մյուս ճառերի պատճառների, այլ Վարդան Հաղպատեցունը: Մեր ենթադրությունները խարսխվում են մի քանի փաստերի վրա: Նախ ամբողջությամբ մեջբերենք պատճառը՝ ըստ ՄՄ ձեռ. 621, թ. 251ա:

«Պատճառ Գրիգորի Աստվածաբանի գրենացն: Պատճառ
Քրիստոս ծնեալ ճառին Եղիայի վարդապետի Ասորոյ ասացեալ:

¹ **Տեր-Պետրոսյան Լ.**, Ասորիների դերը հայկական Կիլիկիոյ մշակութային կեանքում ԺԲ-ԺԳ դարերում, Հայագիտական մատենադարան, «Բազմավեպ», 28, Վենետիկ, 1989, էջ 26: Տե՛ս նաև **Տեր-Պետրոսյան Լ.**, Փորձ հայ հին և միջնադարյան թարգմանական գրականության պարբերացման, «Էջմիածին», 1982, Գ, էջ 40-50:

² **Տեր-Պետրոսյան Լ.**, Ասորիների դերը . . . , նշվ. աշխ., էջ 28:

³ Նույն տեղում, էջ 30:

⁴ ՄՄ 1480, թ. 112բ:

Արդ, «Քրիստոս ծնեալդ» զկնի ԺԷ. ճառի է, ըստ համարոյ, իսկ գրոցն նախադասի վասն տօնախմբութեան և է ասացեալ ի Կոստանդնուպօլիս, յորժամ հերձուածն Արիոսի ճարակէր ի քաղաքին նուագունք մնացեալ յողղափառութեան թոտով՝ Ը. ոգիք կարծեալ ողղափառացն ընդ հերձուածողացն կարծեաց կործանիլ: Յայնժամ յղէ թագաւորն առ մեծն Բասիլ և ծանուցանէ նմա զիրն և աղաչէ առաքել զոմն իմաստուն առ ի ճակատումն արիանոսաց աղանդոյն: Իսկ նա առաքել զսուրբն Աստուածաբան, զոր և ինքն մարգարէացեալ էր, թէ. «Յետ մահու Հօր իմոյ այլոր կարգելոց է զիս Հոգին»: Հասեալ առ թագաւորն և լուեալ վասն ամենայնի եկեացէ, ասէ, տօն Ծննդեանն, և լինի մեզ առիթ և կատարեցին ի նմին ի մեծ եկեղեցոջն, և ելեալ ի բարձր ինչ տեղի խօսեցաւ ի լոր ողղափառաց և ամենայն հերձուածողաց զճառս զայս, զոր խորհրդածել էր»:

Ինչպես վերը նշվեց, այս պատճառը որոշ խմբագրումներով պահպանվել է նաև 437, 3937, 5254 ձեռագրերում՝ Եղիա Ասորու՝ որպես հեղինակի մասին տեղեկանքով կամ առանց դրա: Կ. Մուրադյանի կարծիքով 621 ձեռագիրը համառոտ ցանկի տպավորություն է թողնում, իսկ 5254 միջամտված մի տարբերակ է¹: Միևնույն է, նա վերոբերյալ պատճառի հեղինակ է համարում Եղիա Ասորուն, քանի որ մի շարք ձեռագրերում պարզորոշ կերպով նշվում է նրա անունը:

Այնուամենայնիվ, Եղիա Ասորու սույն պատճառի հեղինակ լինելը միանշանակ չէ: Մեզ կասկածի տեղիք է տալիս, մասնավորապես, դրան հաջորդող լուծմունքի նախերգանը, որը ՄՄ 1480 ձեռագրի ընդօրինակողը կոչում է «այլ պարձառ կարճառոյ»²:

«Որպէս Սոկրատն ասէ, յառաջ քան զթագաւորել մեծին Թէոդոսի Գրիգոր Աստուածաբան երթևեկ առնէր ի Կոստանդնուպօլիս Ը. ամ ի յեկեղեցին Անաստասիոն կոչեցեալ: Եւ ապա յետ այնորիկ թագաւորն Մեծն Թէոդոս մեծարեաց զնայ յիր քաղաքն և ի կաց ի ժամանակս նորա Դ. ամ, մինչև ի ժողովն մեծ: Եւ զճառս զայս յետ ԺԸ. ճառի է ասացեալ անդ ի Յայտնութիւնն Տեառն՝ հրամանաւ թագաւորին, զի բազում հերձուածս խօսէին ի Քրիստոսի տնօրէնութիւնն ի հրէից և ի հեթանոսաց, հարկեցաւ խօսել»³:

Վենետիկի 805 և 1358 ձեռագրերի լուծմունքներից բացի, մնացած բոլոր լուծմունքները՝ լինեն Շնորհալու-Հաղպատեցունը, թե Եղիա Ասորունը, սկըս-

¹ Մուրադյան Կ., նշվ. աշխ., էջ 173:

² ՄՄ 1480, թ. 112ա:

³ Տե՛ս ՄՄ 621, թ. 259ա, ՄՄ 59, թ. 42ա, ՄՄ 1480, թ. 112ա և այլն: ՄՄ 59-ում չկա «որպէս Սոկրատն ասէ» սկսվածքը, այլ սկսվում է «յառաջ քան զթագաւորել» արտահայտությամբ:

վում են վերոգրյալ նախերգանով: Ուշադիր ընթերցանությունը վեր է հանում պատճառի և նախերգանի տեքստերի նմանությունը:

Մեր կարծիքով նախերգանը Եղիա Ասորունն է: Այս մասին վկայում է վերջինիս սկսվածքը, որը համահունչ է ՄՄ 1480, Վենետիկի 805 և 1358 ձեռագրերում պահպանված Եղիա Ասորու լուծմունքի շարադրանքին: Լուծմունքի տեքստում բազում տեղերում ունենք նախերգանի նմանությամբ «որպէս» (ասոր.՝ «այխ») բառով սկսվող մեկնություններ, օր.՝ «Դարձեալ խաւար լուծանի: Լծ. Որպէս ի ձեռն արեգական...», «Մի՛ զճաշակելիս պոռնկեցուցուք: Լծ. Որպէս պոռնկութիւն այլ է քան զամուսնութիւն...», «Մի՛ շօշափելեցն շնորհեսցուք...: Լծ. Որպէս զակն ի պայծառութենէ հրաժարեցոյց...», «Մի՛ պայծառ քարամբ: Լծ. Որպէս ի զգեստն ոչ է պարտ պճնել...» և այլն¹: Այսպիսի օրինակները շատ են և բնորոշ են Եղիայի տեքստին, ինչը ցույց է տալիս, որ նախերգանը Եղիա Ասորունն է և թարգմանվել է լուծմունքի հետ միասին: Հավանաբար, այս նախերգանն էլ Եղիայի գրած «կարճառոտ պատճառն» է, քանի որ մյուս բոլոր ճառերի համար նա ունի գրած պատճառներ, որոնք էլ թարգմանվել և խմբագրվել են Վարդան Հաղպատեցու կողմից: Թերևս Հաղպատեցին այս պատճառը գրել է իր հեղինակած լուծմունքի համար, հետագայում այն վերագրվել է Եղիային:

Վարդան Հաղպատեցու «Ի ծնունդն Քրիստոսի» ճառի հակիրճ պատճառի հեղինակ լինելու օգտին է խոսում նաև այն փաստը, որ **Տոնապարձառոտի** իր խմբագրության մեջ «Պատճառ «Քրիստոս ծնեալ» ճառի» միավորի պատճառային հատվածում որոշակի խմբագրումներով և ընդարձակումներով նա ընդգրկել է թե՛ վերոգրյալ պատճառը և թե՛ Եղիայի գրած և իր թարգմանած նախերգանը, որն ինչպես նշեցինք, ավելի շուտ պատճառ է:

Իսկ Գրատիանոս, ոչ ունելով որդի, առնու կցորդ թագաւորութեանն իւրոյ Թէոդոս Մեծ, որ էր սպանիացի, զի էր այր քաջ և բազում անգամ ի պատերազմի հանդիսացեալ և երկիւղած ի Տեառնէ ...

Իսկ թագաւորն Թէոդոս յորժամ զբազմութիւն հերձուածողացն տեսանէր, որ բնակեալ էին ի Կոստանդինուպոլիս, ի վարանս մտանէր, թէ որպէս կարասցէ զքաղաքն բժշկել յայնպիսի չարաչար և դառն հերձուածոց, քանզի ԺԲ հերձոածք էին անտ և ոչ գտանէր անտ ուղղափառ զոք, բայց միայն ոգիք Ը.:

¹ Եղիա Ասորու լուծմունքում տեսանելի են ասորաբանությունները: Նախադասությունների մեծ մասը սկսվում է ասորերեն արձակ աստվածաբանական տեքստերին խիստ բնորոշ «որպէս», «իբրև» (ասոր.՝ այխ), «ոչ որպէս» (ասոր.՝ լա այխ), «թեպէտ», «քանզի», «վասն զի» (ասոր.՝ «մտուլ») սկսվածքով, ինչը վկայում է, որ սա թարգմանական երկ է:

Եւ էր մերձ տան Ծննդեան և Յայտնութեան Տեառն: Ասէ Աստուածաբանն առ թագաւորն. «Եկեսցէ ար տանի Աստուածայայտնութեան, զի եղիցի մեզ ջատագով ազնականութեան ընդդէմ չարափառացն և ձեռնտու և առիթ Բանին վարդապետութեան»: Եւ քաննեցին ի նմին եկեղեցոջ զքրան Ծննդեան և Յայտնութեան Տեառն: Իսկ Գրիգոր, ելանելով ի բարձր ինչ տեղի, ճառէ ի լսելիս ամենայն ժողովրդեանն հաւատացելոցն ի Քրիստոս՝ և հրէից և կռապաշտից և հերձոածողաց, զորս խոհածեալ էր «զՔրիստոս ծնեալ» ճառն: Այլ ոչ է սա առաջին ճառ ի նմանէ ասացեալ, այլ զկնի Ի. և Է. ճառի է ասացած, այլ վասն տանիս խնդրոյ նախադասեցաւ ի սկիզբն գրոցս¹:

Գ. Զարբհանայանը, խոսելով Գրիգոր Աստվածաբանի «Քրիստոս ծնեալ» ճառի թարգմանության և մեկնությունների մասին, գրում է, որ դրա մեկնություն սկզբում ձեռագրերը միշտ (sic!) հավելում են «կայսրն Գրատիանոս ոչ ոնելով որդի...» սկսվածքով պատճառը, ապա պատմում Աստվածաբանի գալուստը Թեոդոս կայսեր մոտ և ճառն ասելը²: Չենք կարող ասել, թե ինչ ձեռագրեր է Գր. Զարբհանայանը ձեռքի տակ ունեցել, սակայն ակնհայտ է, որ այս սկսվածքով տեքստը վերցված է Տոնապատճառից:

Վարդան Հաղպատեցու «Պատճառ «Քրիստոս ծնեալ» ճառի» պատճառային հատվածն աղերսներ ունի Գիրք Պարձառացի «Պատճառ և սկիզբն Աստուածաբանի. Յաղագս Քրիստոս ծնեալ ճառին» միավորի հետ: Հարկ է նշել, որ վերջինիս տեքստը Գրիգոր Աբասյանը հիմնականում քաղել է Վարդան Հաղպատեցու Տոնապարձառի միավորից³, որը մինչ Գիրք Պարձառացի կազմում ընդգրկվելը անցել է Վարդան Արևելցու Տոնապարձառի խմբագրության մեջ: Բերենք երկու համեմատություն՝ ցույց տալու համար տեքստի փոխանցման ընթացքը Շնորհալու-Հաղպատեցու լուծմունքից մինչև Գիրք Պարձառացի համապատասխան պատճառը:

ՄՄ 621, թ. 251ա [Շնորհալի-Հաղպատեցի]	ՄՄ 2021, թ. 41ա Վարդան Հաղպատեցու Տոնապարձառ	ՄՄ 4139, թ. 33ա-բ Վարդան Արևելցու Տոնապարձառ	ՄՄ 1879, թ. 162բ Գիրք պարձառաց
Արդ, «Քրիստոս ծնեալը»	Իսկ թագաւորն Թէոդոս յորժամ	Իսկ թագաւորն Թէոդոս յորժամ	Վասն որոյ եւ մեծս այս

¹ ՄՄ 2021, թթ. 40բ-41ա, 42ա, հմմտ. 4139, թթ. 33ա-33բ, 34բ:
² **Զարբհանալեան Գր.**, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վենետիկ, 1889, էջ 352:
³ Տե՛ս ՄՄ 1879, թթ. 158բ-162բ:

զկնի ԺԼ: ճառի է ... և է ասացեալ ի Կոստանդնու- պօլիս, յորժամ հերձուածն Արիոսի ճարա- կէր ի քաղաքին, նոսզունք մնա- ցեալ յուղղափա- ռովթեան՝ թոով Ը. ոգիք կարծեալ ուղղափառացն ընդ հերձուածու- ղացն կարծեաց կործանիչ:	զբազմութիւն հեր- ձուածողացն տե- սանէր, որ բնա- կեալ էին ի Կոս- տանդինուպոլիս, ի վարանս մտա- նէր, թէ որպէս կարասցէ զքա- ղաքն բժշկել յայն- պիսի չարաչար և դառն հերձուածոց, քանզի ԺԲ. հերձո- ածք էին անտ և ոչ գտանէր անտ ուղ- ղափառ զոք, բայց միայն ոգիք Ը.:	զբազմութիւն հեր- ձուածողացն տե- սանէր, որ բնա- կեալ էին ի Կոս- տանդինուպոլիս, ի վարանս մտանէր, թէ որպէս կարաս- ցէ զքաղաքն բժշկել յայնպիսի չարաչար և դառն հերձուածոց, քանզի ԺԲ. հերձուածք էին անտ և ոչ գտանէր ի քաղաքի ուղղա- փառ զոք, բայց միայն ոգիք Ը.:	որդիսն եկեղե- ցոյ սկսանի յա- սելն «Քրիստոս ծնեալ լինի» եւ այլն. զկսկծելին հերձուածողաց զանուն ծննդեան ի կիր առնու հրաշիւք, յորժամ եկն Աստուածաբան ի քաղաքն, ութ հոգի միայն եգիտ ուղղա- փառ:
---	--	--	---

Մեկ այլ հատված է.

ՄՄ 2021, թ. 42ր Վարդան Հաղպարե- ցու Տոնապարձառ Եւ բազում աստու- ածաբանք, որպէս Եսայի ի մարգարէսն: Եւ այս աստուածաբա- նութիւն նորա. «Ես առաջին և ես առ յա- պայ, յառաջ քան զիս ո՛չ որ է և զկնի իմ ո՛չ որ ել»: Եւ Յովհաննէս յաւետարանիչսն, և այս է աստվածաբանութիւն նորա. «Ի սկզբանէ էր Բանն, և Բանն էր առ Աստուած և Աստուած էր Բանն»: Եւ Պաղոս	ՄՄ 4139, թ. 35ա Վարդան Արևելցու Տոնապարձառ Իսկ աստուածաբան Գ. են՝ Եսայի ի մարգա- րէս, Յովհաննէս յառա- քեալս, Գրիգոր ի վար- դապետս: Եսայի ասէ ի զիմաց Աստուծոյ. «Ես առաջին և ես առ յա- պայ»: «Յառաջ քան զիս ոչ գոյ Աստուած և զկնի իմ ոչ այլ լիցի»: «Ես եմ, ես եմ և չիք այլ որ», և «Մինչև կարի իսկ ծե- րասջիք, սակայն ես եմ»: Իսկ զՅովհաննէս ասէր. «Ի սկզբանէ էր Բանն և	ՄՄ 1879, թ. 162ր Գիրք պարձառաց Աստուածաբանք երեք էին. Եսայի ի մարգարէսն, Յոհաննէս յառաքեալսն և յաւետարանիչսն, Գրիգոր ի հայրապետսն /in marg. Պղատոն յիմաստասէրսն/: Եւ զինչ էր սոցին աստու- ածաբանութիւնն. Եսայի ասէ. «Ես առաջին եւ ես առ յապայ, ոչ որ յառաջ, քան զիս, և է իբրեւ զիս յառաջ կայցէ: Իսկ Յո- հաննու. «Իսկզբանէ էր Բան եւ Բանն էր առ Աս- տուած եւ Աստուած էր
--	--	--

յառաքեալսն, և Գրիգոր ի հայրապետան, յորում ասաց. «Աստուած էր միշտ և է և եղիցի», մանաւանդ թէ՛ է միշտ:

Բանն էր առ Աստուած և Աստուած էր Բանն: Նա էր ի սկզբանէ առ Աստուած»: Եւ Գրիգոր ասէ. «Աստուած էր միշտ և է և եղիցի, մանաւանդ թէ՛ է միշտ»:

Բանն, Նա էր ի սկզբանէ առ Աստուած»: Եւ Աստուածաբանին է այս. «Աստուած էր միշտ և է և եղիցի, մանաւանդ թէ՛ միշտ, և երիցն չորս է»:

Գալով Գրիգոր Նազիանզացու «Քրիստոս ծնեալ» երկի մյուս ճառերի Եղիա Ասորու հեղինակած «պատճառների» հարցին, նշենք, որ դրանց թարգմանիչը, ինչպես և խմբագիրը, թերևս նույնպես Վարդան Հաղպատեցին է: Այսպիսի եզրակացությունը համար մեզ հիմք է տալիս ոչ թե «Ի ծնունդն Քրիստոսի» ճառի պատճառը, այլ դրան հաջորդող «Դարձեալ իմ Յիսուս» ճառի պատճառում առկա մի տեղեկություն, որը, թերևս, Հաղպատեցու միջամտությամբ է անցել տեքստի մեջ: Ստորև ներկայացնում ենք այն՝ ըստ ՄՄ 621, թթ. 251ա-251բ¹:

Դարձեալ իմ Յիսուս: Յետ ասելոյ զճառս «Ծնեալ», ի մտանել արեգականն առաքեաց թագաւորն շրջել ընդ քաղաքն զոմանս՝ թէ զինչ ասեն: Եւ շրջեալ ի ծածուկ հերձուածողքն ըզպարտութիւն խոստովանէին և հեթանոսաց փիլիսոփայքն ասէին յոյժ հանճարեղ բանիբուն երևի այրն, բայց զԱստուած, որ այնքան գովեալ ի կնոջէ ծնեալ ասաց, որ է անտեղի: Եւ լուեալ թագաւորն՝ կոչեաց զԳրիգոր, ի վաղին ծանոյց նմա: Եւ նա ասաց. «Արդ, հրամայեալ գալ ամենայն հեթանոսաց փիլիսոփայիցն, զի առ նոսա եմ խօսելոց»: Եւ իբրև ժողովեցան ասաց ճառս զայս: Իսկ Թարիանէ իմաստասէր ասաց փեառն Ներսէսի՝ «Ի բազմութիւն քաղաքին ո՞վ շրջէր և ո՞ գիտէր զմիտս նոցա: Այլ ունէր սուրբ Աստուածաբանն Հոգի մարգարէութեան, զիտաց Հոգովն, զի հրէայք գայթակղեցան, հեթանոսք ծիծաղեցան, հերետիկոսք լեզուգարեցան: Ընդ նոցա կարծիս խօսեցաւ ի վաղին: Ոմանք յետ ԺԲ. աւուր ասեցին ասացեալ է և ոմանք՝ ի գալ միւսոյ ամին և տօնին, բայց ստեն»²:

¹ Տե՛ս նաև ՄՄ ձեռ. 437, թթ. ՄՄ ձեռ. 5254, թթ. 149բ-150ա, ՄՄ ձեռ. 3937, թթ. 63ա-64բ:

² Գրիգոր Աստվածաբանի «Դարձեալ իմ Յիսուս» ճառի եղիա Ասորու պատճառի հետքերը երևում են նաև «Գիրք պատճառաց»-ում: Մասնավորապես, «Պատճառ Դարձեալ իմ Յիսուս ճառին» միավորում մեջբերվում է Վարդան Հաղպատեցու հավելումը՝ «Թարա իմաստասէր այսպէս ասաց առ տէր Ներսէս, թէ առ մեծութիւն քաղաքին ո՞վ կարէ շրջիլ», որտեղ «Թարիանէ» անվան ավելի համառոտ՝ «Թարա» ձևն է նշվում (ՄՄ ձեռ. 1879, թ. 163ա): Այս փաստն արժանացել է նաև Հ. Անսայանի ուշադրությանը, թեև նա նշում է, որ սա Եղիա Ասորու հիշատակությունն է: Տե՛ս Անսայան Հ., նշվ. աշխ., էջ XV, տողատակ 2:

Ընդգծված նախադասությունը մեր կարծիքով Վարդան Հաղպատեցու հավելումն է, որտեղ խոսքը Ներսես Շնորհալու և նրա «հոռոմ» ընդդիմախոս, հայտնի փիլիսոփա, մագիստրոս Թեորիանոսի բանակցությունների մասին է: Վերջինիս հետ Շնորհալու երկխոսությունն ընթանում էր Մանուել Կոմնենոսի վարած եկեղեցիների միություն քաղաքականության շրջանակներում, որը սկսվում է 1165 թ. և ձգվում մինչև 1178 թ.: Գրիգոր Դ Տղա կաթողիկոսի ժամանակները:

Թեորիանոսի բանակցությունները Ներսես Շնորհալու հետ սկսվում են Կիլիկյան զորահրամանատար Ալեքս Աքսուխի նախաձեռնությամբ¹: Նա երկու անգամ գլխավորել է Բյուզանդական պատվիրակությունը, որը Կոստանդնուպոլսից մեկնելով Հռոմկլա, բանակցություններ էր վարում եկեղեցիների միության շուրջ: Առաջին բանակցային փուլը ընթացել է 1169-1170 թթ., իսկ երկրորդը՝ 1171-1172 թթ.:

Այս առումով հարկ է հիշել Թեորիանոսի «Տրամախոսություն հայոց կաթողիկոսի հետ» (*Διάλεξις πρὸς τὸν καθολικὸν τῶν Ἀρμενίων*) երկը, որտեղ կատեխետիկ շարադրանքով խիստ հունադավան դիրքերից ներկայացված է նրա և Ներսես Շնորհալու միջև ընթացած բանակցությունների բովանդակությունը²:

Այստեղ հարկ ենք համարում անդրադառնալ բանակցությունների որոշ մանրամասների, քանի որ դրանք լույս են սփռում մի շարք խիստ կարևոր խնդիրների վրա: Այսպես, վերը նշեցինք, որ Թեորիանոսի և Շնորհալու գլխավորած առաջին բանակցությունն ընթացել է 1170 թ., իսկ ավելի հստակ, սկսվել է մայիս ամսին և տևել մինչև հոկտեմբեր ամիսը: Թեորիանոսի «Տրամախոսություններից» իմանում ենք, որ հիմնական բանախոսները ինքը և Շնորհալին էին: Երկուսը թվարկվում են երկու կողմից մասնակիցները. հայկական կողմից մասնակցում էին Ներսես Շնորհալին, Գրիգոր եպիսկոպոսը (հավանաբար Գրիգոր Տղան), Սափիրի եպիսկոպոս Պետրոսը, Քեսունի հակոբիկ-ասորի եպիսկոպոս Հովհաննես Ասորին, Վարդան վարդապետը (հուն. տեքստը տալիս է «ὁ διδάσκαλος Βαρταν»՝ ձևը³, լատ.՝ *doctor Bartan, magistros Bartan*¹), Ստեփանոս վարդապետը և Իսահակ եպիսկոպոսը²:

¹ Թեորիանոսի անձի և Հայ և Բյուզանդական եկեղեցիների միջև բանակցային գործընթացի շուրջ մանրամասն տե՛ս **Բոզոյան Ա.**, Հայ-Բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը (1165-1178 թթ.), Եր., 1995:

² Հունարենից առաջին անգամ լատիներեն և հայերեն թարգմանել է Կղեմես Գալանոսը: Հունարեն տեքստը տե՛ս Theoriani, PG, t. 133, pp. 119-212, 212-298: Հայերեն տեքստը տե՛ս **Պալճեան Ա.**, Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի Հայս և միութեան նոցա ընդ Հռոմեական եկեղեցոյ, Վիեննա, 1878, էջ 204-260:

³ Theoriani, ibid., p. 165, **Բոզոյան Ա.**, նշվ. աշխ., էջ 149:

Մեզ հետաքրքրող անձը Վարդան վարդապետն է, որին Ալիշանը հիշում է «Վարդան մը» ձևով³, իսկ Մ. Օրմանյանը, հետևելով Գալանոսին, կոչում է Վրթանես⁴: Ա. Բոզոյանը բերելով սույն ցանկը, ընդգրկում է նաև մի անանուն անձի, ով Ներսես կաթողիկոսի խնդրանքով հայերեն է թարգմանում Գրիգոր Աստվածաբանի «Յաղագս Որդույ բան երկրորդ» ճառից մի հատված⁵: «Տրամախոսությունների» համաձայն բանակցությունների ժամանակ Թեորիանոսը հիշում է Գրիգոր Աստվածաբանի ճառից մի գրվագ Քրիստոսի մի բնություն «յետ միությունն» չպաշտելու մասին, որն ըստ Ներսես Շնորհալու Աստվածաբանի հայերեն թարգմանության մեջ չկար: Թեորիանոսը, ով խոստովանում է, որ ասորերեն չգիտի, կաթողիկոսին ցույց է տալիս Քեստնում իր հայտնաբերած Գրիգոր Նագիանզացու երկերի մի օրինակ և առաջարկում ընթերցել «իսկ կաթողիկոսն կոչեալ զոմն ի նոցանէ, որ հմնրագոյնք էին ասորոց բարբառոյ, հրամայեաց ընթեռնուլ և եգիտ գրեալ որպէս ասէրն Թէորիանոս»⁶:

Մեր կարծիքով վերոնշյալ Վարդան վարդապետը հենց Վարդան Հաղպատեցին է, ով էլ կաթողիկոսի համար թարգմանել է ասորերեն տեքստը: Այս եզրակացության համար հիմք են տալիս հետևյալ փաստերը: Թեորիանոսի երկում պատվիրակության բոլոր անդամները անուններով հիշվում են: Հնարավոր է, որ «զոմն ի նոցանէ»-ն պատահական մարդ չէր, այլ պատվիրակության անդամներից մեկը, իսկ Ներսես Շնորհալու մտերիմ Վարդան վարդապետ Հաղպատեցին հրաշալի տիրապետում էր ասորերենին: «Տրամախոսություններում» սույն Վարդան վարդապետը Քրիստոսի երկու բնությունների կապակցությամբ բավականին երկար վիճաբանում է Թեորիանոսի հետ⁷: Երկրորդ, Վարդան Հաղպատեցու թարգմանած «Դարձեալ իմ Յիսուս» Մկրտության ճառի պատճառում Թեորիանոսի հարցադրումը «տէր Ներսէսին» Գրիգոր Աստվածաբանի վերաբերյալ անշուշտ ականատեսի վկայություն է: Բանն այն է, որ Թեորիանոսը առաջին բանակցությունները արձանագրել է տեղում, հետո արդեն Կոստանդնուպոլսում դրանք վերջնական՝ «ուղղափառ» տեսքի բերել՝ համառոտելով և հանելով մասնավորապես, Քրիստոսի Ծննդյան տոնին վերաբերող հատվածները⁸:

¹ Ibid., p. 166.

² Բոզոյան Ա., նշվ. աշխ., էջ 148-149:

³ Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 421:

⁴ Օրմանյան Մ., Ազգապատում, հտ. Ա, Էջմիածին, 2001, էջ 1665:

⁵ Բոզոյան Ա., նշվ. աշխ., էջ 148:

⁶ Պալճեան Ա., նշվ. աշխ., էջ 215:

⁷ Theoriani, ibid., p. 165.

⁸ Բոզոյան Ա., նշվ. աշխ., էջ 143, տող. 13:

Ներսես Շնորհալու «Ընդհանրական թուղթը»-ում հստակ ասվում է, որ օրակարգային հարցերից մեկը Աստվածածնի Ավետումը, Քրիստոսի Ծնունդն ու Մկրտությունը նույն օրը տոնելու հայ եկեղեցու վաղեմի ավանդույթն է։ Ներսես Շնորհալին «հռոմեներին» այս կապակցությամբ պատասխանում է. «Գրեալ էր առաջին, թէ ի Յունվարի ի հինգն տօնեն վաղին Աւետեաց եւ երեկոյն Ծննդեանն եւ ի միա վաղին՝ որ է վեց Յունվարի, Մկրտութեան Քրիստոսի», իսկ հետո ներկայացնում է հայ եկեղեցու դիրքորոշումը՝ «Ավետեացն տօն ըստ մերումս ի ելթն Ապրիլի է, իսկ ծննդեանն ի վեցն Յունվարի... Քանզի Ծննդեան և Մկրտութեան ի միասին տօնելոյ՝ բազումս ունիմք վկայութիւն»¹։ Երբ բանակցությունների երկրորդ փուլի ժամանակ (1171-1172 թթ.) Թեորիանոսն անդրադառնում է դրան, Ներսես կաթողիկոսն ասում է, որ առաջին բանակցային փուլում արդեն խոսել են այս մասին, և կարիք չկա կրկին քննարկելու²։ Սակայն, «Տրամախոսություններում» նման տեքստ չի գտնվում։ Մինչդեռ Վարդան Հաղպատեցին, լինելով պատվիրակության կազմում, տեղյակ է խոսակցության մանրամասներին, և, փաստորեն, Գրիգոր Աստվածաբանի «Ի պահու իմում» ճառի Եղիա Ասորու պատճառի թարգմանության մեջ դնում է նաև Թեորիանոսի Ներսես Շնորհալուն ուղղված հարցադրումը, ապա և բացատրում³։

Ասվածը վկայում է այն մասին, որ Եղիա Ասորու պատճառները և լուծմունքները Վարդան Հաղպատեցին թարգմանել է 1170 թ. հետո, քանի որ երկրորդ բանակցային փուլին չի մասնակցել և նրա անունը չի հիշվում։ Հավանաբար, հենց դավանաբանական այս նկատառումներով էլ Ներսես Շնորհալին խնդրել էր Վարդան Հաղպատեցուն «Քրիստոս ծնեալի» Ա միավորի համար մի լուծմունք գրել՝ իր մեկնության հենքի վրա, իսկ Վարդանն էլ իր հերթին ձեռնարկել էր «ուղղափառ իմաստասեր» ասորի Եղիայի հեղինակած պատճառների և լուծմունքների թարգմանություն-խմբագրությունը, որ, հավանաբար, իրականացրել էր Հռոմկլայի առաջին բանակցություններից հետո։ Եղիա Ասորու լուծմունքների

¹ Ընդհանրական թուղթը սրբոյն Ներսիսի Շնորհալույ, Երուսաղէմ, 1871, էջ 94: Նաև, **Բողոքան Ա.**, նշվ. աշխ., էջ 32:

² Theoriani, ibid., p. 268.

³ Պատճառի վերջին «ումանք յեպ ժԲ. ատոր ասեցին ասացեալ է և ոմանք՝ ի գալ միսոյ ամին և րօնին, բայց սրեն» արտահայտությունը խոսում է մինչ օրս ձգվող վիճաբանության մասին, այն է՝ Ծննդյան ճառը Գրիգոր Աստվածաբանն ասել է 379 (380) թ. դեկտեմբերի 25-ին, իսկ Մկրտության ճառը՝ դեկտեմբերի 25-ից տասներկու օր անց նույն տարում, այսինքն՝ հունվարի 5-ին, կամ էլ մյուս տարվա 380 (381) թ. հունվարի 5-ին, ինչն ըստ Ներսես կաթողիկոսի և Վարդան Հաղպատեցու սուտ է։ Այս հատվածն ավելի հանգամանալից բացատրությամբ տեսնում ենք Գիրք Պատճառացում, թ. 163բ:

վերտառություն մեջ «ուղղափառի իմաստասիրի» արտահայտությունը խոսում է նրա **հույխանական** (իմա՝ երևութական) կամ ծայրահեղ **սևերական** (իմա՝ ապականական) չլինելու փաստն ընդգծելու դիտավորության մասին¹:

Մեր համոզմամբ Վարդան Հաղպատեցին իր լուծմունքը, **Տոնապարձառի** խմբագրությունն ու Եղիայի երկերի թարգմանությունն իրականացրել է գրեթե միաժամանակ՝ Կիլիկիայում, ինչի վկայությունն են վերոբերյալ տեքստային անցումները Եղիայի երկերից Շնորհալու-Հաղպատեցու լուծմունք և տոնապատճառային հավելումների անցումները Եղիայի լուծմունքի թարգմանության մեջ: Եղիա Ասորու բնագիր տեքստի առկայության դեպքում կարող էինք այս անցումների ավելի ամբողջական պատկերն ստանալ բայց, ցավոք, մեր երկար փնտրտուքները Եղիա Ասորու լուծմունքներն ասորերենով հայթայթելու ուղղությամբ առայժմ հաջողությամբ չեն պսակվել:

Մեր ենթադրությունների ճիշտ լինելու դեպքում ասվածի հենքի վրա կարելի է մոտավորապես թվագրել **Տոնապարձառ** ժողովածուի Վարդան Հաղպատեցու խմբագրությունը: Այսպես, Եղիայի պատճառները թարգմանվել են 1170 թ. հոկտեմբերից հետո, ինչի մասին վկայում է դրանցում տեղ գտած Թեորիանոսի և Ներսես կաթողիկոսի հարցուպատասխանի հատվածը, ապա խմբագրվելով մտել են Վարդան Հաղպատեցու **Տոնապարձառի** որոշ միավորների մեջ: Ինչպես Խաչատուր գրչի վկայությունից է երևում, Հաղպատեցին իր **Տոնապարձառը** հաստատել էր տվել Ներսես Շնորհալուն (անշուշտ դավանաբանական նկատառումներից ելնելով), իսկ Հաղպատ վերադարձել է Շնորհալու մահից հետո միայն: Ներսես Շնորհալին մահացել է 1173 թվի օգոստոսին: Ստացվում է, որ **Տոնապարձառի** սույն խմբագրությունը պետք է դնել 1170 թ. հոկտեմբերի և 1173 թ. օգոստոսի միջև, այսինքն՝ 1171-1172 թվականներին:

¹ Դժվար է ասել՝ Եղիա Ասորու լուծմունքում առկա «Քրիստոս ի վերայ երկրի: Լծ...զի մի ասիցեն թե ի յերկնիցն եբեր զմարմինն» արտահայտությունը՝ դրված նախադասության վերջում, որ կա նաև Հաղպատեցու լուծմունքում հենց Եղիայինն է, թե՞ Վարդան Հաղպատեցունը: Եթե այս հատվածը Եղիայինն է, ապա նրա լուծմունքից է անցել Հաղպատեցու լուծմունքի և **Տոնապարձառի** մեջ, իսկ եթե Հաղպատեցունն է, որն ավելի հավանական է, ապա կցվել է Եղիայի տեքստի նախադասության վերջում՝ նրան «ուղղափառ» ասորի փիլիսոփայի ստատուսում հաստատելու նկատառումով:

**ԳՐԻԳՈՐ ՆԱԶԻԱՆԶԱՅՈՒ «Ի ԾՆՈՒՆԴՆ ՔՐԻՍՏՈՍԻ» ԾԱՌԻ
ԵՂԻԱ ԱՍՈՐՈՒ ԵՎ ՎԱՐԴԱՆ ՀԱՂԱՍԵՑՈՒ ՀԵՂԻՆԱԿԱԾ
ԼՈՒԾՄՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐՏԱՑՈՂՈՒՄԸ
«ՏՈՆԱՊԱՏՃԱՌ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐՈՒՄ**

Աննա Օհանջանյան

Բանալի բառեր՝ Տոնապատճառ, լուծմունք, ընթերցվածք, Գրիգոր Նազիանզացի, Վարդան Հաղպատեցի, մեկնություն, Եղիա Ասորի, թարգմանիչ, ճառ, խմբագրություն:

Հոդվածում քննվում է Գրիգոր Նազիանզացու «Ի Ծնունդն Քրիստոսի» ճառի անանուն մի լուծմունքի հեղինակի հարցը: Այս լուծմունքը որոշ ձեռագրերում հանդիպում է Եղիա Ասորու հեղինակ լինելու մասին տեղեկանքով: Տոնապատճառային տեքստի քննության շնորհիվ ապացուցվում է, որ մեզ հասած անանուն լուծմունքի հեղինակը Վարդան վարդապետ Հաղպատեցին է, ով Ներսես Շնորհալու խնդրանքով գրում է սույն լուծմունքը: Ցույց է տրվում նաև, որ Վարդան Հաղպատեցին եղել է հայկական պատվիրակության մեջ՝ Թեոդիանոսի հետ Ներսես Շնորհալու վարած բանակցությունների առաջին փուլի (1169-1170 թթ.) ժամանակ: Այս հանդիպումից ոչ շատ անց Վարդան Հաղպատեցին թարգմանել է Եղիա Ասորու անունով հայտնի Գրիգոր Աստվածաբանի լուծմունքները, նաև թարգմանել-խմբագրել նույն հեղինակի գրչին պատկանող պատճառները: Ի վերջո ճշտվում է Տոնապատճառ ժողովածուի Հաղպատեցու կազմած խմբագրության գրության մոտավոր թվականը: Վարդան Հաղպատեցին Տոնապատճառի իր խմբագրությունը գրել է 1171 թ. սեպտեմբերից հետո մինչև 1173 թ օգոստոս ամիսն ընկած ժամանակահատվածում, որի կազմում, որպես առանձին միավոր, ներառել է նաև Գրիգոր Նազիանզացու «Ի Ծնունդն Քրիստոսի» ճառի իր իսկ լուծմունքի մի հատվածի ընդլայնված տարբերակը:

**КОММЕНТАРИИ ЭИЛИИ СИРИНА И ВАРДАНА АХПАТЕЦИ НА “СЛОВО О
БОГОЯВЛЕНИИ” ГРИГОРИЯ НАЗИАНЗИНА И ИХ ОТРАЖЕНИЕ В СБОРНИКАХ
“ТОНАПАТЧАР”**

Анна Оганджян

Ключевые слова: Тонапатчар, комментарии, лекционарий, Григорий Назианзин, Вардан Ахпатеци, толкование, Элия Сирин, переводчик, слово, редакция.

Статья посвящена вопросам относящимся к автору анонимного комментария на "Слово о Богоявлении" Григория Назианзина. В некоторых рукописях данный комментарий упоминается под авторством Элии Сирина. На текстовой основе сборников *Тонапатчар* (Комментарии к Лекционариям или Толкования на Праздники) доказано, что автор данного анонимного комментария является Вардан Ахпатеци, написавший его по просьбе католикоса Нерсеса Благодатного. Вардан Ахпатеци принял

участие в дипломатическом диалоге между армянской церковной делегацией с Нерсесом Благодатным во главе и византийским философом Теорианом в 1169-1170. После этой встречи Вардан Ахпатечи сделал перевод всех комментариев Элии Сирина на "Слова" Григория Назианзина, а также перевел и отредактировал "*патчары*" (причины написания того или иного литературного произведения) написанных тем же автором. Наконец, в статье уточняется и фиксируется дата написания новой редакции *Тонапатчара*, автором которого является Вардан Ахпатечи. Доказывается, что Вардан написал свою редакцию между сентябрем 1170 г. и августом 1173 г., в которую, в виде отдельной еденицы, включил фрагмент из своего же комментария на "Слово о Богоявлении" Григория Назианзина.

**THE COMMENTARIES ON THE ORATION "ON THE EPIPHANY"
OF GREGORY OF NAZIANZUS ATTRIBUTED TO ELIAS
THE SYRIAN AND VARDAN OF HAGHPAT AND THEIR REFLRCTION IN THE
COLLECTIONS "TONAPATCHAR"**

Anna Ohanjanyan

Keywords: *Tonapatchar, commentary, lectionary, Gregory of Nazianzus, Vardan of Haghpat, exegesis, Elias the Syrian, translator, oration, edition.*

The article focuses on the issues related to the author of the anonymous Commentary on Gregory of Nazianzus' Oration "On the Epiphany". In some manuscripts the mentioned Commentary is attributed to Elias the Syrian. On the textual basis of *Tonapatchar* (Commentaries on Lectionaries or the Reasons of Feast days) it is proved that the author of this anonymous Commentary is Vardan of Haghpat, who wrote it by the command of catholicos Nerses the Graceful. Vardan of Haghpat took part in the diplomatic dialogue between Armenian clerical delegacy with Nerses the Graceful in charge and Byzantine philosopher Theorianus in 1169-1170. Soon after this meeting Vardan of Haghpat translated all the commentaries on Gregory of Nazianzus' orations by Elias the Syrian as well as translated and edited *patchars* (the accounts on reasons and circumstances under which certain literal works are composed) attributed to the same author. In the article the date of writing of the new edition of *Tonapatchar* authored by Vardan of Haghpat is clarified and fixed. It is proven that Vardan composed his edition between September of 1170 and August of 1173. He included an enlarged fragment of his Commentary on the Oration "On the Epiphany" by Gregory of Nazianzus in his new edition of *Tonapatchar* as a separate unit.